Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
125

1999

ՆԵՐԾՆԶՈՒԹԻՒՆՔ

ԱՐԴԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Ի ՅԱԿՈԲ Կ. ԱՃԷՄԵԱՆԷ ՊՐՈՒՍԱՑԻՈՑ

№ 196

ՊՈՂՈՍԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. Դ. ԹՕՋԼԵԱՆՑ

)(1872)(

ՀՅ. 131
4 125-60

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԱՌ ՅԵՍՈՒ

Մարդուս իր նմանեայ հետ ունեցած ամենամեծ կապերէն մին է ընկերակցութեան կապը. ընկերութեան մէջ կը ծնիմք. ընկերութեան մէջ կը մնանիմք և կը մեծնամք և վերջապէս ընկերութեան մէջ մեր աչքերը կը ծածկեմք երկրի տեսարաններէն։

Ամենքնիս ալ միևնոյն արիւնէ, միևնոյն նախահօրէ և նախամօրէ սերեալ էակներ ենք, ամենքնիս ալ հաւասար եղբայր ենք միմեանց և ամենքնիս մեկէն կը ներկայացնենք այն համաշխարհական ընկերութիւնն՝ որ ամբողջ մարդկութիւնը կը հասկցուի։

Բայց մարդկութեան այս համաստա-

բած ընկերութիւն զանազան ճիւղերու ստորաբաժանեալ է։ Աշխարհագրական դիրքերով և այլ պարագաներով իրարմէ անջատեալ ժողովուրդներ ունիմք, որք առանձին աշխարհներ կը կազմեն. և իրենց վրայ տիրապետող թագակիր գլուխները և կամ Սահմանադրութիւն ունին։

Այս աշխարհագրական դրից համեմատ կազմեալ ընկերութիւնքն իսկ՝ իրենց մէջ ունին տոհմային բաժանմունք, որ զատ զատ ազգեր կը ներկայացնէ, և ազգայ մէջ կը բավանդակին ուրոյն ուրոյն ընտանիքներ՝ որ նոյն ազգը կը կազմեն։

Ուստի մարդս իւր նմանեաց հետ յարաբերութեան մէջ դնող առաջին կապն ընտանեաց մէջէն կ՚սկսի, մարդուս աշխարհաքաղաքայի ըլլալու ծառայող առաջին օղակներն հոն են. ինքը, իրմէ ետքը իւր ծնողքը, իւր եղբարքը կամ քոյրքը. ազգականները. ազգակիցները. քաղաքակիցները և վերջապէս համայն մարդկութիւնը։

Գ. ՊԱՏԱՐԱՆ

Եթէ ընկերական կեանքն այսպէս բնական եղած է մարդուս, բայց այնպիսի ժամեր կամ պարագաներ ալ կը պատահին յորս երբեմն ընկերութենէ մեկուսի կը մնայ, միայնաբար կապրի։

Եթէ այս միջոցներուն մէջ դատարկութիւնն իսպառ մեր վրայ տիրէ, այն վազասաց ժամերն մեզ համար շատ երկար, շատ տաղտկալի և շատ անհաճոյ կը թուին, ասոր համար բնականաբար որ և իցէ գործ մը կամ պարապում մը գտնելու կը ստիպիմք. և եթէ այն ալ չըլլայ, ապա ձեռք կառնումք մոռացութիւնը, մեր գոյութեան մէջ իբր մշտակայ ընկերն, և միայնութեան ու դատարկութեան ճանձրոյթն ասով մեկդի փարատել կսկսիմք։ Ինչ և է առարկայ մը կամ խնդիր մը՝ որ նոյն պահուն մեր տեսութեան կամ իմացականութեանն

ներկայանայ, մտածութիւնն իբր սիրելի և հաւատարիմ ընկեր զմեզ այնու կը պարապեցնէ և մեր վրայ տիրած տաղտուկն ի զբօսանս և ի հաճոյս կը փոխէ։

Սմնն բանի վրայ ալ կրնամք մտածել, և այդ մտածութիւնն զմեզ ճանձրութեան և տաղտկանաց մէջէն կը վերացընէ ի հեշտանս և ի զուարճութիւն։ Կրնամք այնպիսի իրաց վրայ ևս մտածել՝ որք օգուտ և շահ կը գործեն մեր ընկերաց և բարի արդիւնքներ կը ծնուցանեն։

Գ.

Մտածութիւններն անվնաս և անմոռաց պահելու համար կրնամք ի դիր առնուլ զանոնք. և այն դաղափարներն՝ որք մեր մտքին մէջ միայն ամփոփուած էին անշունչ թղթերուն վրայ արձանացնելով կրնամք հաղորդել զանոնք մեր նմանեաց։ Սանկով ոչ թէ միայն մեզ օգուտ բրած կըլլամք. և մեր ճանձրութեան ժամերն շահաւետ հաճոյիւք անցուցած, այլ նաև մեր ընկերներն ալ մեր մտածմանց հաղորդ ընելով զանոնք միանգամայն մեր հաճոյից մասնակից կընեմք, միայն թէ մտածութիւնք ուղիղ դատմամբ եղած ըլլան. օգտակար նիւթերու և այլոց բարեաց նպաստաւոր խնդրոց վրայ ուղղուին, և միշտ իրենց նպատակ ունենան մարդկային ընկերութեան շահերն. ցոյց տան ինչ որ կը նպաստեն նորա երջանկութեանն և յառաջադիմութեան. ցոյց տան նաև ինչ որ կը հեռացուցանեն և կը զրկեն զնա իւր օգուտներէն, ինչ որ կը խանգարեն իւր բարեկեցութիւնը և կը խափանեն իւր օգուտներն։

Այլոց համար եղած մտածութիւնք՝ որ ի գիր կառնուին, այս պայմաններն ունելու են, պէտք են գրութիւնք այս կէտերն իրենց նպատակն ընեն։ Յայնժամ միայնութեան և դատարկութեան

ժամերն ոչ միայն հաճոյալի և օգտակար կըլլան մեզ, այլ նաև մեր ընկերաց. դուցէ ապագայից ևս։

Դ.

Արդ, սիրելեալդ իմ, Յնտու. քանի որ դուք հրաւիրեցիք զիս մեր ժամանակին ներշնչութեանց վրայօք գրել. մեր դարուն մէջ օրքան զօր ծաւալած դաղափարաց և սկզբանց արտայայտումն ընել. ոչ սակաւ յօժարութեամբ սրտի մտեցայ ի գրիչ, սրտիդ սուրբ բաղձանքն նկատելով որով անշուշտ ընկերութեան բարիքը կըզձայիք։

Սեր ապրած ժամանակին ներշնչութիւնը, այս ծանր և խորին նիւթը, որչափ ալ բեղմընաւոր և արդիւնաշատ, այնչափ ալ բարձր էր իմ կարողութեանս առջին, ուստի պիտի թողուի զայն առաւել յաջողակ և ճարտար գրիչներու. երբ քաջալերական զգացում մը չը դրդեր զիս, թէ քանի որ գործոյն մէջ ընկերական բարիք կայ՝ երկչոտութեամբ մի՛ փախիր և ըրէ ինչ որ կը ներէ կարողութեանդ չափը։ Այս քաջալերական զգացման անսալով նիւթ առի ինձ այն քանի ինչ խնդիրներն և դաղափարներն և բարոյական սկզբունքներն որ կը նպաստեն աղգի և հայրենեաց վերանորոգման, բարոյականի կրթութեան և զարդացման. ղորս պէտք է որ անձնիւր անհատ իրենց կէտ նպատակի բռնեն. և դէպ յայս դիտաւորութիւնս ճգտին։ Այն ատեն ընկերութիւնը կը զարդանայ, կը բարւոքի, և մարդկութիւնն անխոտոր յառաջ կերթայ իւր նպատակին մէջ, որ է երջանկութիւն։ . . .

Բարեկամդ

Յ. Կ. Աճեմեան

ՆԵՐԾՆԶՈՒԹԻՒՆՔ

ՆԱՄԱԿ Ա.

Դաստիարակութիւն, և դաստիարակութեան աղդեցութիւնը ընկերական վիճակի վրայ. քանի մը խօսք առ մայրս

Ի՛մ ծաղկափթիթ բարեկամս,

Սկսինք նախ և յառաջ դրել այն մեծ խնդրոյն վրայ, որ այսօրուան օրս ներհուն իմաստասիրաց լուսի ուշն դրաւած է։ Կենսական ամենակարևոր խնդիր՝ որ մարդկային ազգի բարօրութեան յաղթանակն կը ներկայէ խոհուն մտաց երևակայութեան առջև։ Այո, սա է այն ջրաւոր գործին, որ կապահովէ մար-

գուս յառաջդիմութիւնն և գիւրակեցութիւնն։

Բայց պէտք է հասկնալ թէ ի՞նչ ըսել է դաստիարակութիւն։ Դաստիարակութիւնը մարդուս կենդանական և հոգեկան կարողութեանց մշակութիւնն և ծաւալումն է։ Ասով է որ մարդս իւր կատարելութիւնն կը գտնէ, առանց որոյ անհնար է լինել ճշմարիտ մարդ։

Մարդուս կենդանական կարողութիւնը իւր մարմինը կը ներկայացնէ բոլոր անդամներով, ջիղերով, ոսկերու

զաւակայ ծնունդը կողջունէք բեր՛բա-
պատար, մանիկ ըրէք։ Ձեր ազգականնե-
ը և համբրէն բարեկամները, որոնք և
ձեզ հետ քաղցր ցեծուվեամբ համակ-
ուած, ձեր նորածին զաւակին ապագայ
լաւութեան համար սրտառուչ մաղթանք-
ներ և ափոփիչ յոյսեր կսփռեն առջևնիդ։
զգուշացէք որ մի գուցէ անձերնիդ
խաբէք այդ յոյսերէն, վասն զի յոյսը
և աղօթքը որոնք որ գործքի հետ միաւորած չեն, կարող չենարդիւնքմը ծնիլ,
յուսացէք և աղօթեցէք։ այո՛, զի ասոնք
յաջողութեան նախաշաւիղներն են։ բայց
գործեցէք ալ, որպէս զի կարենաք գըտնալ անխոտոր ճանապարհը յաջողութեան և իսկական լաւութեան։

Մեծ և ծանր է յիրաւի մայրական
պարտաւորութիւնը։ և որչափ մեծ և
ծանր՝ այնչափ ևս սուրբ և նուիրական
քան սրում ծնանիլ և զնեանէն վ՛ըտին
ծնանիլ ի մարդկութեան, և զայն ճըշ-
մարտութեան և արդարութեան շաղին

մէջ դնե՛լ։ ասոնք յիրաւի փառաւոր
գործեր սակայն ի գործ դնելն դժուարին է։ Երանի՛ անոնց։ այն մայրերուն
որք իրենց փոյթերանդն ճիգով ուղիղ
մարդիկ կպատրաստեն իրենց զաւակները։ Աստուծոյ խոնարհ երկրպագուներ
և ընկերականութեան բարի զաւակներ
կընեն։ Ո՛հ ի՞նչ մեծ և քանի՞ անհամեմատ կըլլայ յաջողային իրենց ցնծութիւնը։ երբ ներկայինն ճգանց պտուղը
կքաղեն և կվայելեն անոնցմէ։

Ձեր առ սրտիս ունեցած մայրական
պարտաւորութիւնը, անոնց անտիական
հասակէն սկսեալ պէտք է ի գործ դընէք, դուք բարի մայրեր, գիտեմ որ
ձեր սրտերը եռանդագին վառուած ըլլալով զաւակայ վրայ հանապազօր կը
բաղձայք անոնց բարեկեցութեան որպէս
զի և վայելելով նոցա որդիական փափաքարձ սէրն։ հոգին զմայրի՛ք նոցա նախանձելի վիճակին վրայ, բայց ի՞նչ էս
և ի՞նչ ժ ի՞ցաւ կրնաք ձեր յոյսերը սրբ-

դիմաւորել, ձեր բաղձանքը լրացնել, ձեր մխիթարութիւնը պատրաստել, և ի՞նչ վստահութիւն ունիք թէ յապարդիւնս չհանեն նոքա զայդ յոյսեր։ Կենաց ծերութեան մէջ, յորում ձեր միակ մխիթարանքը պիտի ըլլան ձեր զաւակունք այլ արդեօք նոքա պիտի սփոփեն օգնեն ձեզի։ Բայց անդամ մը մտնելով ընկերութեանց մէջ դիտեցէք մանաւանդ ասցա անցքերը և ընտանեկան կեանքը։ Զարմանալի հակապատկեր մը պիտի ներկայանայ ձեզ, որ պիտի պատկերէ յոմանս ընտանեաց՝ բերկրութիւնն խաղաղութիւնն և հանդիսան և յայլս վրդովմունքը, խռովութիւնը, խեղճութիւնը և տառապանքը։

Սրդ։ բերէք ձեր մտաց առջև այս երկու ընտանիքները, և ուշի ուշով հետաքննեցէք երկուքին ալ կացութիւնը ահա կը տեսնէք որ մին ուղիղ ընթանալով իւր պողոտայէն զմայլանօք կ'վայելէ կենաց քաղցրութիւնը, իսկ միւսն

խոտորնակ քայլելով կ'երթայ մացառախիտ անտառաց մէջ կ'ձգէ զինք, պարզ խօսելով այնչափ տառապանօք և թշուառութեամբ կդառնանայ կեանքն, քան որչափ առաջինն կ'վայելէ ամենաքաղցրը բերկրանք և դերերջանիկ հաճոյք։ Դուք, այս երկու ընդդիմամարտ ընտանիքներն ձեր առջև տեսած ատենիդ ի հարկէ հետաքննին պիտի հարցուցնէք թէ ի՞նչ է այս տարբերութիւնը, ինչո՞ւ մին երջանիկ, իսկ միւսն ապերջանիկ է։ Բայց երբ հետաքննութեան ճամբուն մէջ աւելի յառաջելով դիտէք ու նշմարէք այն երկու ընտանեաց վիճակի տարբերութեան աղբիւրը, այն ատեն ձեր զարմանքն պիտի լուծուի, և ակնարեւ պիտի տեսնէք միոյն երջանկութիւնը, իսկ միւսոյն ապերջանկութիւնը բերող իսկական առիթներն։ Պիտի համոզուիք թէ ուստի՞ ծագումն առած է ընտանեկան կենաց մէջ այն հակապատկեր տեսարանը, յորում մին ընկերա-

կան սիրոյ, եղբայրակցութեան և երախտապարտ զգացմանց կապերով զիրար շղթայած ատեն անգին ուրիշ մը. խռովալի կիրքերով յուզեալ ատելութեան հրով և դառնութեամբ լցեալ անմխիթար դժբաղդութիւնք կ'կրեն։

Բոլոր այս կարծիքն ու խնդիրները լուծելու համար բաւական է ուշ դնել այնպիսի ընտանիքի մը պատմութեան, զոր ալիսի ընեմ ձեզ։— Երևակայեցէք մայր մը կենաց վերջին հասակը թևակոխած որ մանկամարդ տիոց մէջ կորուսած էր զիւր սիրական ամուսինն, երկու մանչ զաւակունք ի գիրկս։

Յովհաննէս անդրանիկն, տասներկուտարեկան հասակին մէջ ձգեր հեռացած էր իւր այրի մօրմէն, և շատ քաղաքներ անցնելով ի Պրուսայէ մինչև ի Ռուսս հասած էր. ուր խոհեմ, տնտես, գործունեայ վարուք և փութալան աշխատանօք հարստանալով առ մայրն իւր վերադարձած էր. և իր հայրենեաց մէջ ամուս-

նանալով մեծ ընտանիք մը կազմէր մօրը, կնոջ, եղբօրը և իրեն սգոյ հասուն աղջկան մը ընկերակցութեամբ։

Հարստի մը յատուկ գեղազուարճ բնակարանն և նորա ճոխ կարասիները նոյնպէս և կարուածներ և հողեր ստացած էր հայրենեաց մէջ. այսպէս իւր շահաւոր վաստակաւ ճոխաբար կը լիացընէր իւր ընտանիքը։ Ամեն օր ուրախութեանց և հրճուանաց նեկտարը և բարեաց վայելիչ բաժակը կպարպէին. վիշտ և կսկիծք հեռի էին անոնցմէ, ուրախ և զուարթ վիճակի մը մէջ կապրէին։ Այլ աւաղ որ. սոյն ընտանիքն ալ ընդ երկար չմնաց այս ցանկալի վիճակին մէջ։ Երբ գիշեր մը անագորոյն մահը. իւր սայրասուր գերանդն առած կմանէ Պ. Յովհաննու տունը. իւր բազմաձայն երկաթոնն կ'կարէ կենաց թելը, և այսպէսով իւր ընտանեաց երջանիկ կացութիւնն կաղաւաղի։ Դժբաղդութիւն՝ փոխանակ բարեբաղդութեան. չգոյութիւն՝

փոխան ճոխութեան. խռովութիւն փոխան հանդստեան, վերջապէս փոխանակ խաղաղութեան վրդովումն ծայր ստանձան կըլլէն յետոյ զայդ ընտանիս։

Կուլայ մայրն, կողբայ, կարտասուէ բարի ծերուհին այն, վասն զի իւր որդւոյն կորստեան հետ կորոյս միանգամայն զիւր բարօրութիւն. կողբայ, վասն զի այլ ևս չպիտի կրնայ սիրական որդւոյն բաղձալի տեսակցութիւնը վայելել, նորա բաժանմանէն բաժանեցաւ նաև ուրախութեանց և բերկրանաց վայելչէն։ Մի՛ զարմանաք և մի տարակուսիք թէ ի՞նչպէս կրնայ հարսի մը ժառանգորդ ընտանիք մը ընդ վաղ զրկիլ իւր բարօրութենէն և իյնալ ի դժբաղդութիւն։ Տեսէք թէ ի՞նչպէս դժբաղդացաւ այս փարթամ ընտանիքը։

Պ. Յովհաննէս մեռնելէն վերջը յայտնի է որ նորա դոյքը իր մարդկան պիտի յատկանար։ Բայց միայն հանդուցեալին կինը իր բաժինն առնելով դարձաւ հայ-

բենի տունը։ Հանդուցեալն եղբայր մը ունէր Պօղոս անուն, որ իր երկրին մէջ ծագկեալ արհեստի մը տիրացած էր. բայց աւա՜ղ որ անգամ մը ինք անէնատուր եղած էր պարսաւելի շռայլութեան որ յաւէտ յաջողակ էր էն ամբաւ հարստութիւնքն իսկ փճացընել։ Կսկսէր այնուհետև Պօղոս աղատաբար իւր մոլութեանն, Պօղոս արդէն ծոյլ և անաշխատ կեանքի միտումներն ալ ունէր այս վատթար սովորութեան հետ. և ահա մեծ առիթ մը իրեն, ճոխ ժառանգութիւն մը կը վայելէ և այլ ևս ամենայն ինչ, ոչ ինչ են նորա առջև։ Խելագարի նման կթափառի յեղաշրջիկ, կգեգերի միշտ ի սրճարանի. ի գինետան, ի զբօսարանս։ Կը ձգէ իւր աշխատանքը և այս անիրաւ զուարճութեանց կամ մեղապարտ զբօսանաց զհետ պնդի. այո՛, վասն զի որքան որ ըստ պատշաճին եղած անմեղ զուարճութիւնք օրինաւոր և արդար են. նոյնչափ ալ կարդէ դուրս անսովոր օրե-

բու մէջ գործէ քաշուած զբօսանաց հեռեւիլն չէ՞ անարժան և ապօրինի. բայց զատանք մտածող գլուխը ո՞ւր, Պօղոսի ուսօցվրայ նա որ ապագայն անգամ չը խորհեր։ Հո՛, հո՛. պիտի ըսէ արհամարհանօք, զապագայն խորհիլ, վաղուանը այսօր մտածել, ի՞նչ փուճ բաներ են. և կրկնելով Ս.Բտաչէսի աչխարհակալին խօսքը իւր բաժակը պարպելու պիտի ըզբաղի անոր նման ըսելով. «կեր արբ և ուրախ լեր. զի վաղ մեռանիս»։ Ս.պառաժուտ կամ անմշակ հողի վրայ ցանուած սերմունք ի՞նչ արդիւնք կրնան բերել, քան այն տեղը ըզր ժիր մշակին քրտունք թրջելոյն։ Պիղծ սրտերու անդաստանին ինկած բարի խրատք ի՞նչ պըտուղ կրնան բերել, որչափ բարի և խղճահար սրտերը, որ անպիտան խրատներէ անգամ օգուտ կքաղէ։— Եատ չարաչար գործածեց Պօղոս Ս.Բտաչէսի խօսքը, որ խոհական մտքի համար բարի խրատ մը կրնայ ըլլալ, բայց բարի

գործելու համար պիտան ալ պէտք է բարի ըլլայ, բաբէ. ի՞նչ հեռի խօսք այնպիսի մարդոյ համար որ իւր կեանքը, ժամանակը, ինչքը և արհեստը ի մի բան վատնել ուխտեց ի տաճարին բաղոսի, և աւաղ որ ըրաւ ալ. ամեն բան վատնեց մինչև անգամ տանը կարասեաց շատն, այսպէս թէ ինք և թէ մայրն յետին ծայր դժբաղդութիւնը բռնեցին, որք քիչ մը յառաջ երջանիկ կապրէին, երբ Պ. Յովհաննէս Կինդանի էր։...»

Բայց տեսէք հիմա այն ծերուհին որ կենաց վերջին տարիներուն մէջ իւր զաւկին մխիթարութիւնն և օգնութիւնն վայելել կ'յուսար և այդ գեղեցիկ յոյսերով ջրուած էր զՊօղոս և. տեսէք ի՞նչպէս ի դերև հանեց մօր յոյսերը։ Այս ըսելով պէտք չէ ենթադրել թէ ուրեմն մայր մը մխիթարանաց և օգնութեան յոյս չունենալու է իւր զաւկին վրայ, ոչ։ Ս.դարև մայր մը կամ հայր մը, գրնայ զաւկին վրայ դնել ապաղայ յոյսը և նո-

բա օգնութիւնն ու բարիքը վայելել, բայց այն պայմանաւ որ գեղեցիկ և կատարեալ կրթութեամբ մեծցրուելու է զայն։ Սրդարև մարդուս վարքը կնմանի այնպիսի հողերու որ երեսի վրայ թողուած ատեն անպիտան խոտեր և եթէ կ'արտաքերեն, բայց ժիրաժիր ձեռք մը եթէ լաւագոյն մշակութեան ներքև առնու զայն այն ատեն խոպանացեալ երկիրը արդիւնալից անդաստանի կ'վերածի. և այն որ առաջ անպէտ և ապարդիւն խոտերով փուշերով և տատասկներով պատած էր հիմա իր առատ բերքերով կ'պսակէ ըղձանս մշակողին։

Սոյպէս մարդս ի մանկութեան այնպիսի յոռի և անարդ կրից մէջ կ'թեւակոխէ, որ եթէ բարերար ձեռք մը յօգնութիւն չփութայ, ալ այնուհետև յաւէտ դերի կինայ նոյն կրից։

Սրդարև մարդուս թէ բարի և թէ չար ունակութիւններն կապացուցանեն թէ ի՛նչպիսի կրթութեամբ կամ վա-

րուք անոյշցած է իր մանկութեան օրերն։ Որովհետև ինչպէս նոխնիք սովորաբար ըսած են. մարդուս մանկութիւնը կնմանի ընքոյշ ծառի մը, որ դեռ չը մեծցած երեն ծառութիւնը կրնայ շտկուիլ բայց յետոյ ոչ, մարդս ալ երբ իր անուշդայ վարուց մէջ բարի կրթութիւն մը չստանար, մինչև ի մահ այնպէս պիտի երթայ։

Գալով մեր պարզամիտ ծերուհւոյն կըսեմ. նա չկրցաւ իր մայրական պարտաւորութիւնն անթերի կատարել. վասն զի ինչպէս յայտնի է. Պօղոսի մատղաշ տարիքներուն մէջ յորում սերտը տպաւորութեանց տեղ կուտայ. սա ամենոր յոռի բնաւորութիւնները, մոլի հակամիտութիւնքը, անկիրթ ճաշակներն ու ընթացքն կերպով մը ուղղելու անիոյթ դտնուած էր։ Մայրական դորովն առորդիս. որ անչափ ազդու և պերճախօս է սրտերու և մտաց վրայ. բնաւ չէր ցուցած անոր։ Պօղոսի դարուն հասակին

մէջ երբեք չէր խօսած ախտաւորութեան
քաղցրութեանը, տնտեսութեան օգուտ-
ներուն, առաքինութեան և բարեգործ-
ութեան բերկրապարար հեշտանաց վը-
բայ. նորա միտքը անմշակ և տգէտ թող-
ուած էր, և նորա երևակայութիւնը չէր
զարթուցած ժանտադէմ մոլութեանց
և չարագործութեանց ահաւոր պատկե-
րին վրայ. և ոչ խակ ուսուցիչ մը չէր
փայլեցուցած նորա աչքն. այսպէս Պօ-
ղոս իւր մօրը դատապարտելի անհոգու-
թեամբ չէր սովրած ճշմարիտ կենաց
գործառնութիւն. չէր սովրած մարդոյ առ
Աստուած, առ ընկերն և առ անձն եռ-
եակ պարտականութիւնքը. այլ բանա-
կան արարածի մը քայլավայելուչ ունա-
կութիւններէ զուրկ մնացած էր իբրև
կենդանի անբան։ Սոսկ ֆիզիքապէս
մնացած գոլով բարոյական և մտային
դաստիարակութեանց ճաշակն չէր առած
Այսպէս մայրն անփոյթ լինելով իւր զա-
ւակը իբր ճշմարիտ և կատարեալ մարդ

հասցունելու. ապա մեծ դժբաղդու-
թիւններ կ'կրէր նորա երեսէն։

Ս. հաւասիկ. մայրե՛ր. տեսէք անկիրթ
տղայն որքան աղետից և տառապանաց
դռներ բանայ իւր մօրն առաջ. կայր և
տգէտ բանականը ի՞նչ տրտում և խըղ-
ճալի բերրու պատճառ կուտայ։

Ս. հա այս պատմութիւնս կբացատրէ
վերոյիշեալ երկու ընտանեաց հակա-
պատկեր տեսարանին պատճառներն։

Ս. սով կ'սովրիմք թէ, պարտ է զմարդ
անդամին ի տղայ տիոյ մարզել յուսմուն-
նս և ի դաստիարակութիւն, որպէս զի
իւր ընտիր վարքովն մօրը սփոփանք հայ-
թայթէ, և արդէն շատ ընտանեաց դժ-
բաղդութեան հիմնական պատճառ ան-
կիրթ զաւակներն են. որ կարտադրեն
տգէտ մտաց արդիւնքն։ Երկրորդ դի-
տելի է որ, մտաւորական կուրութիւնը.
տնտեսութեանց և խնայողական սկզբանց
անճանաչ գանուիլն, կարճ խօսքով տը-
գիտութիւնն է, որ իրի մը հետևանքը

և ծանրութիւնը և անոր յառաջելիք
ՁԼԱՆ կամ վտանգն չկշռադատած .քայ-
լել ու ընթանալն է կենաց շաւղին մէջ,
որ ոչ թէ միայն զմարդ կը մոլորէ և ա-
պօրինի ընթացից կենթարկէ, այլ և ըն-
տանեաց օրպիսութեան մէջ տարբերու-
թիւն կգոյացնէ, կրթեալին կընծայէ
երջանկութիւն և խաղաղութիւն. իսկ ան-
կրթին վրայ կ'բերէ ձախողակի գէպքեր
և վիճակ։

Ուրեմն լաւ ի միտ առնումք թէ քանի՞
ծանր և անհրաժեշտ կարևոր է դաստիա-
րակութիւն, և ո՞վ կրնայ ուրանալ նորա
օգուտներն, որ այս օրս մարդկային սե-
ռի բարօրութեան նպաստաւոր միջոց հա-
մարուած է, և զոր դարուս հանճարա-
միտք նկատեցին իբր ստիպողական պէտք
մը կենաց ճանապարհն հեշտ և ուղիղ
պատրաստելու մեր առջև։ Իսկ արդ եթէ
դարուս մէջ դաստիարակութեան պէտ-
քըն և կարևորութիւնը օրքան զօր զգա-
լի կըլլայ, ձեզ ալ կը մնայ ուրեմն լսել

իմաստնոց խրատն, «դաստիարակեցէք
ձեր զաւակունք», դաստիարակեցէք
կըսեմ, մայրեր, անոնց ձայնին յարելով,
դաստիարակեցէք, բայց կատարեալ
դաստիարակութեան մէջ։ Թերի և ան-
կատար դաստիարակութիւնը առաւել
ՁԼԱՍ է, քան բնաւ չդաստիարակված
ըլլալն։

Դաստիարակութեան մէկ ճիւղին մէջ
կրթել, միւսին մէջ անկիրթ պահել. մի-
ոյն մէջ գիտուն ընել. միւսին մէջ ոգէտ,
այս իսկ անօգուտ կըլլայ։ Ո և է մեկու
կենդանապէս միայն կատարելագործին
և մտաւորականի ու բարոյականի մէջ
խակ և թերակատար մնալը նորա ապա-
գայ լաւութիւնը չերաշխաւորեր։

Երևակայեցէք ձեր մտաց աչք մարդ
մը կենդանապէս մնալ և դաստիարակ-
եալ. ի դէտ կացէք և տեսէք. իւր կեան-
քը, իւր շարժումները, իւր գործերը։
Տեսէ՛ք ինչ՞ վայելուն առոյգութիւն իւր
կերպարանաց վրայ. ինչ՞ քաջութիւն ի-

հայեցուածս, ինչ առողջութիւն յանձին կազմուածի, ինչ անվնասներ շարժմունք, ինչ արիասիրտ քայլառութիւնք ինչ ուժեղ և կորովալիր բաղուք։ Ահա մարդն՝ որ մարմնական կատարելութեան ճշդրիտ տիպարն մի կը հանդիսանայ, լաւ, բայց երբ նորա դայութեան աւելի խորն թափանցեմք, որպիսի արդահատանք զմեզ պիտի չարժէ, երբ դիտեմք նորա հոգեկան բնութիւնը. խոպանացեալ և անմշակ։ Տեսէք, ի՞նչ ոգէտ և յապուշ կը վարուի նա յայսմ մասին. մտքի պարապութիւն մ'է որ կըտիրէ հոս, ընդունայն խօսքեր իւր լեզուի վրայ. անարժէք դաղափարք և կարծիք ի բերան, անպէտ ապարդիւն կեանք մը ի մտաւորին։ Անդորդ իւր անդրբաղ ժամերուն մէջ, տաղտուկն ու սրտնեղութիւնը զինք կձանձրացնէ, չճանաչէր և չդիտեր ճշմարիտ և քաղցր ճաշակ և նախանձելի վայելմունք մի պարապոյ օրերուն մէջ։ Իւր կենաց այս մտաւոր մասը կ'անրանայ ունայնու-

թեանց ունայնութեամբ։ Այսպէս է ահա լոկ կենդանապէս դատարակեալ անցի կենցաղ. զոր համառօտս նկարագրեցի դեռ Երևակայեցէք այնպիսի մարդ մ'ալ, որ քիչ շատ հմտութիւն ունի ընկերութեան ամենակարևոր դիտելեաց վրայ. իւր միտքը ուսմանց դեղանի զարդուք և իմաստութեան ու ճշմարտութեան հրաշալեօք պճնաւորած, բայց սա ևս պարսաւելի է, յորժամ ուսմունքքն և իմաստութիւնն, բարոյականի և առաքինութեան միութենէն բաժանէ։ Զի որ մեզանէ ընդ դէմ բարոյականի, մարդկային զդացմանց և ամբիծ ուսուաքինական վարուց արժանի է պարսաւանաց քան զանուս և զանդէտ անձինս։ Զի դատարակութեան ամենամեծ նպատակը մարմինն ու միտքն կրթելէ է զատ մարդկային սեռին ուղիղ և մաքուր բարոյականը պատրաստել է։ Վասնորոյ դուք, եթէ կուզէք որ ձեր զաւակունք իրենց դովելիս ընթացքնուք ձեր մխիթարա-

նայ առիթ ըլլան. փոյթեռանդն չանա-
ցէք որ դաստիարակութեան այս եռակի
ճիւղին մէջ ալ անթերի կրթումն նոքա,
որով արժանաւոր անդամներ պատրաստ-
ին մարդկային այս համատարած ըն-
կերութեան, լաւ ճանաչելով իրենց
պարտաւորութիւնքը, իրաւունքը և
ճշմարիտ մարդկութիւնքը։ . . .

Եւ այլ ևս ձեզ կ'թողում խորհրդա-
ծել թէ ի՞նչ անհրաժեշտ պարտաւորու-
թիւն է ի վերայ մարց կրթել կամ կրթել
տալ իրենց զաւակունքը. և այս իսկ երա-
կոցունց մը և որդւոյ լաւութեան ու մը-
խիթարանաց համար։

Ս.Հ. . . մարդկային երջանկութիւնը.
զոր իմաստասէրք կ'յատկացնեն մեզ. ա-
ռևու պէս ճշմարտութիւն մեզած պիտի
ըլլար, երբ մարդկան համօրէն ընկերու-
թիւնն զգայր դաստիարակութեան շահե-
ալն և ի սիրտս տարածուէր։ Ս.յն ա-
ռանձնաշխարհային երանութեան բեղմնա-
ւոր անդաստանին մէջ ցանուած թշուա-

առութեանց որոմներն մեծաւ մասամբ
կ'անհետանային և տառապեալ մարդ-
կութիւնն թշուառութենէ զերծանելով
աղատաբար կ'բայլեր դէպ ի յառաջդի-
մութիւն։

Ս.յո՛, այն ատեն յառաջ կ'երթայինք
երբ մարմնոյ, մտաց և սրտի դաստիա-
րակութիւնն ընդհանրապէս ծաւալեր
մարդկային ընկերութեան մէջ, երբ
մարդկութիւնն դաստիարակութեան այս
երեք ճիւղին մէջ ալ քաջալարժ կամ
բարեկիրթ շատ անդամներ ունենար։

Երբ ազգ մը բնականի կողմանէ այ-
սինքն կենդանապէս դաստիարակուի,
միանդամայն մտաւորական դաստիարա-
կութիւնն ալ զանց չառնուէր, և այնու
հանդերձ սրտի կրթութիւնը այսինքն
բարոյական զգացմանց կատարելութիւն-
քն իբր խստան և անոլիտան չվրիպէր
ուշադրութենէ, այլ իբր ամենէն կարե-
ւորագոյն և ամենէն սիրողական ման
մանկան կրթութեանը սինդ բարձր տե-

զը բռնէր, և այս դրութիւնը բովանդակ ընկերութեան մէջ ընդունելի ըլլար կարծեմ այն ատեն հնարին կըլլար մարդուս երջանկութեան և ազատութեան մէջ յառաջ դիմելուն գործը։ Վասն զի ինչպէս վերը յայտնի եղաւ, կատարեալ և օգտակար դատիարակութիւնը մարդուս կենդանական և հոգեկան կարողութեանց մէջ ստացած անթերի հրահանգութիւնն է։ Նոյնպէս վերը յայտնի եղաւ, թէ այս փրկարար դրութիւնը անգործադրելի մնացած ատեն ի՞նչպէս ընտանեաց դժբաղդութեանցն ճամբայ կը բացուի։ Եւ ընտանեաց դժբաղդութիւնը որո՞ւ կը պատկանին եթէ ոչ ընկերութեան. զի ասոնք ընկերական չարիքն կըկազմեն։

Սրդ որովհետև մարդկային ընկերութեան բաղդն ընտանեաց ծոյլն կսկսի և որովհետև առաքինի և բարեկիթ անդամներէ զուրկ ընտանիքներ թշուառութեան մէջ կը տառապին, ապա պէտք է աշխատիլ, որ նախ ընտանեաց երջանկութիւնը պատրաստեմք, դատիարակութիւնը մարմնոյ, դատիարակութեամբ մտաց և դատիարակութեամբ սրտի։ Եւ երբ ընտանեաց զաւակունք այսպիսի կատարեալ դատիարակութեամբ զարգանան և երջանիկ վիճակ ստանան, հետևութիւնն այս է, որ նոյն ընտանիքները բաղկացնող աղգն ալ պիտի երջանկանայ։—

Ա. հաւասիկ. դատիարակութեան ընկերական վիճակի վրայ ունեցած այս մեծ ազդեցութեան համար է, որ դարուս մէջ այնչափ կարևորութիւն տրուած է այս խնդրոյն, և որուն վրայ որչափ ալ խօսուի, որչափ ալ վիճաբանութիւն ըլլայ, որչափ ալ թուղթ սևնայ, դարձեալ քիչ է։

Ընկերական բարեկեցութեան գործոյն ուրիշ բան մը այնչափ նպաստաւոր չէ կարող ըլլալ, որչափ որ այս կատարեալ դատիարակութեան համայնական ծաւալումն։

ՆԱՄԱԿ Բ.

—

Յառաջդիմութիւնը ի՞նչ է, մարդս ի՞նչպէս յառաջ կերթայ, ո՞րոնք են նիւթական և բարոյական յառաջդիմութիւնք.

—

Ազնի՛ւ և սիրելի բարեկամս,

Մեր նախնեաց նամակաւ բաւական երկար քննեցինք դաստիարակութեան օգուտներն և ազդեցութիւնն ընկերական վիճակի վրայ. տեսանք թէ ընտանեաց երջանկութիւնն և ծնողաց մխիթարութիւնքն պատրաստելու համար կատարեալ դաստիարակութեամբ կրթուած զաւակներ պէտք են, որ իրենց մարմնոյ մասայ և սրտի կատարելութիւններովն կարենան մարդկային ազգի յառաջդիմութեանը նպաստել։

Յառաջդիմութի՛ւն. ահաւասիկ բառ մ՚ալ ինչպէս դաստիարակութիւնը, որ մեր ժամանակին մէջ շատ բերաններէ կը լսուի, և շատ գրութեանց նիւթ կը մատակարարէ. ուստի արժան է, որ մեք ալ փոքր ինչ ակնարկ մը ուղղենք այս նիւթոյն վրայ և քննենք թէ ո՞րն է մարդկային ազգի յառաջդիմութիւնը։

Յառա՛ջ երթալ. ապաքէն բնական այս անյեղլի օրէնքը որ անդիմադրելի հոսանքի մը կը նմանի, ոչ միայն մարդոյ, այլ և բնութեան մէջ դտնուած երեք դաս ստեղծուածոց ալ, կենդանեաց և բուսականաց և հանքայնոց պայմանն եղած է, յառաջանա՛լ և կատարելագործիլ. և սակայն այս ընթացքն ալ կապուած է շրջանի մը որուն կը յաջորդէ իջնալ և ոչնչանալ։ Ա՛ռաջնոյն յետոյն և յետոյնոն առաջնոյ։

Բնութեան այս անեղծանելի կարգը. յառաջդիմութիւնը, կրնամք երկուքի բաժնել. նիւթական յառաջդիմութիւն

բարոյական յառաջդիմութիւն։

Նիւթական յառաջդիմութիւնը բնութեան ծնունդ եղող բոլոր ստեղծուածոց վրայ ալ կը նկատուի. զոր օրինակ. երկրագնդիս վրայ կան այնպիսի՛ք որ թէ և ի սկզբան փոքր և մոտացածին բաներ են և այնպէս երևան կուգան, բայց ժամանակի հոլովման հետ կը դիմեն դէպի կատարելութիւն և իրենց օգուտը կըտիրեն։

Սրեղակը, տիեզերաց այս լուսաշող կանթեղը, դեռ նոր ծագելու մօտ ինչ աղօտ նշոյլ ցոյց կուտայ և ինչպէս անզօր կերևի, բայց քիչ մը վերջը բոլոր տիեզերքը իւր պայծառութեամբն կողողէ կը լուսաւորէ. դիշերային խաւարը կը հալածէ և նիրհող բնութեան նոր կեանք, նոր արթնութիւն և նոր զուարթութիւն կընորշնչէ իւր ջերմութիւնը առաւօտեան մեղմիկ ցողոյն հետ միանալով թալկաթաւալ դալարներն իրենց թմրութենէն կըզարթուցանէ վերջապէս

ամբողջ երկիրս շարժման մէջ կը բերէ, և այն որ քիչ մը յառաջ անզօր ըլլա մը ուներ, հիմա ակնախտիղ ճառագայթներ կարձակէ, և զաշխարհ կըջեռուցանէ։

Սրեղակը թողլով աչքերնիս զարմանալի կենդանւոյ մը վրայ ուղղենք։ Ո՞ր ընքանչելեացս, այս կենդանին որ երկնքիւր կերպարանը կըփոխէ, և երկնքիս կը նմանի կըզարթնու, ի սկզբան ամենափոքր և գրեթէ չնչին հունտ մ՚է, որ եռաբ տեսակ մը որդ կըլլայ օր քան զօր աճելով և մեծնալով, վերջապէս կսկսի իւր ճարտարահիւս արհեստը գործելու, կը շինէ իւր բոյնը (խոզակը) և յայնմ կապարտանի. շերամագործքը կըծակեն նորա բոյնը, ուրկէ թրթռուրի մը կերպարանը առած դուրս կելնէ, կը ձգէ հոնոյը, իւր սերունդը, կըմեռնի կոչնչանայ. իւր բանած խոշոր դեղեցիկ կերպասուց և մետաքսեայ զգեստուց նիւթը կը հայթայթէ այս փոքրիկ որդին (շերամ) չրջանը ինչ չարմանալի է, զոր ճանչցողները միայն

գիտեն։ Դարձունեմք աչերնիս ուրիշ կողմ։ Դիտեմք վայրիկ մը ևս սա երկնուղէշ և սաղարթախիտ մայրիներն և մեծամեծ կընձիւոյ ծառերն, որք իրենց եթերախառն բարձունքին մերթ ընդ մերթ լայնաճիւղ ոստերնին շարժելով իբր թէ յիշեցընել կուզեն մեզ իրենց ժամանակ մը յառաջ անցեան բոյսմը. և անկէ ևս յետոյ փոքրիկ հաստատ մը ելլանին և ժամանակին դարաւոր հոլովմամբ այդ հասակն հասնելնին։

Ահա ցոյց տուած սոյն երեք օրինակներէս բացայայտ կերևի, որ բնութեան ծնունդ եղող բոլոր բաներն տկար և փոքրիկ կը ծնին, և զբոս յառաջ անդր ի կատարելութեան տանի ժամանակն։ Մարդս ալ այս նիւթական յառաջդիմութեան ենթակայ է, նախ անզօր և փափուկ ծնելով ժամերու և օրերու յեղաշրջութեամբ կը զարգանայ և կատարելագործի։

Կատարելութեան մը արտաքին երևոյթ եղող սոյն յառաջդիմութիւնն է, որ նիւ-

թական կը կոչուի։ Սակայն ուրիշ տեսակ յառաջդիմութիւն ալ կայ, որոյ մարգկային սեռը միայն ենթակայ է, Բարոյական յառաջդիմութիւն, որ մարդուս հոգեկան կարողութեանց կատարելութեան մէջ կը հասկցուի, և ինքը ինչպէս որ նիւթապէս օր ըստ օրէ կաճի կը զարգանայ և կատարելագործի, նոյնպէս նաև բարոյապէս յառաջ կերթայ այն կարողութեանց մէջ, որք զինքը կը տարբերեն կը բարձրացնեն միւս անբան կենդանիներէն, այն կարողութեանց մէջ կը սեմ. որ կը կամի, կը յիշէ, կը բաղդատէ, կը դատի, կորոշէ, կը հնարէ, և այլն։

Երբ ժամանակագրութեանց վրայ խոր ընթերցանին ուշադրութիւն մը դարձունեմք, հոն, անցեալ դարուց մէջ եկող գացող բիւրաւոր մարդկան կենցաղն և այլ հանգամանքներն նշմարելով ներկային հետ բաղդատեմք բարոյական յառաջդիմութեան մասին անհուն տարբերութիւն մը պիտի դանեմք։

Ներկայ դարս ցոյց կուտայ թէ մարդկային միտքը. այլինքն մարդին կարողութիւնները այնպէս յառաջացած են, որ ըստ ոլորովին կարդերազանցեն զանցեալը։

Մարդկային սեռին յատուկ այս բարոյական յառաջդիմութիւնը, ջնջելով սխալ կարծիքներն և ծուռ դատողութիւններն, ցրելով մթին և անորոշ խորհուրդներն, առաւել լուսաւորեալ դարափարաց, վերմ մտածութեանց և ընտիր դատանց տեր կընէ զմեզ։ Բարոյական յառաջդիմութեամբ, մեր մտաւոր կարողութիւնները զարգանալով, կրթողութիւնք խոտորնակ և մոլոր ճամբաներն, և ընտրանօք ի բարին կը դիմենք։

Մեր մտքերը քանի յառաջանան ի կատարելութեան. այնչափ ալ մեր ընկերական վիճակը կըբարւոքի և ամենուս փափաքած Երջանկութեան արևը կըծագի վրանիս։

Մնաց որ մարդուս այս բարոյական յառաջդիմութենէն զուրկ են ուրիշ ա-

բարածներն և կենդանիներն. վասն զի յայտնի է, որ նոքա ընտրութիւն չունենալով բարւոյ և չարի դիտութեան մէջ անորոշապէս թէ ի բարին և թէ ի չարն կըդիմեն, մանաւանդ բարին ճանչնալու ուրիշ կարողութիւն չունին, բայց եթէ բնազդում մը, որով բնականապէս կարող կ'ըլլան իրենց վտանգն կամ չարիքն նշմարելու։ Ունին նաև բնական ճարտարութիւնք կամ կարողութիւնք, որովք իրենց կենսական պիտոյքը կը հայթայթեն։

Յիշենք այն ժրաջան մեղուներն և իրենց փեթակին մէջ կանոնաւորեալ ընկերակցութիւնն, յորում ծաղկանց հիւթէն մեղր կըզործեն և իրենց ապրուստն կըպատրաստեն, բայց չէ՞ որ նոքա ինչ որ էին ասկէ տարիներ, դարեր յառաջ, հիմա ևս ճիշդ նոյնը չէ՞ իրենց գործերուն ձևերը և իրենց ընկերական կարգապահութիւնը և չը՞ մակաբերուիր թէ այնպէս պիտի մնան միշտ առանց

այլափոխութեան։ Սակայն ապացոյց մը չէ՞ անոնց բարոյական յառաջդիմութենէ զուրկ ըլլալնուն։

Բայց եթէ աչերնիս մարդկային արուեստից և գործոց վրայ դարձուցեմք, դարուց հոլովման հետ անոնց կրած փոփոխութիւններն և լաւագոյն կատարելութիւնները կընչմարենք։ Վասն զի մտքին կարողութիւնները հետզհետէ զարգացած և յառաջ դացած են, և այսպէս պիտի երթայ դալուց ընթացքին հետ։

ՆԱՄԱԿ Գ.

—

Գիտութեանց անհրաժեշտ պէտքն, տգիտութեան աղետալի հետևանքները, աշխարհի քաղաքակրթութեան վրայ քրիստոնէութեան ազդեցութիւնը, ազգայ կենդանութեան և բարգաւաճանաց անժխտելի պայմանը։

—

Սիրելեալդ իմ Յեսու,

Մարդկային ազգի բարոյական յառաջդիմութեան վրայ խորհրդածելով յայտնի եղաւ թէ գիտութիւններն որչափ կարևորութիւն և անհրաժեշտ պէտք ունին մեր մտաւոր կարողութեանց զարգացմանը։ Բանզի եթէ մեր մտքերը այն բեղմնաւոր անդաստաններն են,

որ վսեմ յատկութիւններ և վեհագոյն
կարողութիւններ կըպարունակեն, ի՞նչ-
չով անոնք պիտի մշակուին ու ծաղկին,
եթէ ոչ գիտութիւններով։

Հետամուտ ըլլալ ուրեմն գիտու-
թեանց. մշակեմք մեր մտքերն անոնց-
մով, որպէս զի անհարթ և խուզանաց-
եալ չը մնան։ Գիտութիւնք կըվերածը-
նեն զմեզ ի մեծութիւնս և ի բարեբաս-
տիկ կեանս։ Ի՞նչ է մարդկութիւնն ա-
ռանց գիտութեան, եթէ ոչ խեղճ խա-
զալիկ մը դիպուածոց ձեռքը։ Ես մարդ-
կային միտքը էր զեկ նկատած եմ,
իւր կազմուածքը էր նաւ մը, իսկ աշ-
խարհս ովկեան մը։ Այս մարդս այս
աշխարհի ովկէանին վրայ նաւու մը պէս
կը յառաջանայ։ Այս ովկէանին մէջ ի-
րարու մերձակայ չա՛ս ժայռեր կըգտ-
նուին, երանի՛ անոր, որ իւր նաւուն
զեկը (ըսել կուզեմ՝ միտքը) դործա-
ծելով անվտանգ կանցնի այն ժայռերու
մէջտեղէն, որք ժայռ ձախողութեանց

կըկոչուին։ Վա՛յ նոին, որ առանց բա-
ռեկազմ, հաստատուն և նորաշէն զե-
կի այս վտանգալից ովկէանին մեծ տա-
ռածութեան վրայ նաւորդելու կը պատ-
ռաստուի, որ օր մը չէնէ օր մը անշուշտ
այն ժայռերէն չըկտրենալով աղտոտել
իւր նաւը, պիտի խորտակի և անդնդա-
ծոյզ պիտի ընկղմի նորա խորութեան
մէջ։ . . .

Սրդ ինչո՞ւ մերժեմք և հետամուտ
չըլլամք գիտութեանց, որք զմարդն
փառաւորելով հանդերձ չարեայ և ձա-
խողութեանց դիմադրելու կարողութիւն
կըպարդևեն, ինչո՞ւ մերժեմք անոնց
կենսատու լոյսը, զոր ամենուն անխտիր
կըճառագայթեն և այնու մեծութեան
և երջանկութեան ճանապարհը կըպար-
զեն մեր առջև։ Այն ամեն ճարտա-
ռութիւնք և արհեստք, որոցմով մարդ-
կային պիտոյքներն դիւրապէս և վա-
յելչութեամբ կըպատրաստուին գիտու-
թեանց ծնունդներն են։ Որչափ աբ-

խուր և վայրենի պիտի ըլլար մեր վի-
ճակը, ինչպէս որ էր նախնի դարուց
մարդոցը, երբ դիտութեանց ծնունդ՝
այդ ճարտարահիւս արհեստներէ մեք
ալ զուրկ մնայինք։ Բայց դիտութեանց
օգուտները հոս չեն վերջանար. մեր ընկ-
երական վիճակի բարեկեցութեան ալ
մասամբ կընպաստեն ինչպէս տգիտու-
թիւնը կըվատթարացնէ մեր բարեկեց-
կացութիւնը։

Բաբէ՛. անցեալ դարուց պատմու-
թեան վրայ ակնարկ մը ձգած ժամա-
նակնիս օրպիսի ցաւօք պիտի տեսնեմք
որ մարդկութեան պերճ և չքեղ փառ-
քերն կարի յոյժ նեմացած են ի պատ-
ճառս տգիտութեան և որա հրէշային
ծնունդը. եղծ նեստորութեան, կու-
րութեան, նախապաշարմանց և բռնա-
կալութեան։ Այնպէս որ Յառաջդիմա-
թիւնը, լուսաւորութիւնը աղատութիւն
և բարեկրթութիւնը, որք մարդկային
կենաց նշանաբաններն պարտ էին ըլլալ,

կասեցան իրենց ընթացքէն և ընկերա-
կան սիրոյ. արդարութեան և իրաւանց
զգացմունք խեղդեալ խափանեցան.
վասն զի տգիտութիւնը մարդկային մըտ-
քերն ընդ երկար պարաւանդելով բա-
նական լուսոյ ծաւալումն կարգիլէր, ա-
սով անհնարին զեղծմունք, մոլութիւնք
անկրթութիւնք յառաջ կուգային և
մարդկութիւնը իւր փառաշքեղ մեծու-
թենէն ի վայր ցածուցանէին։ Նոյն իսկ
անցելոյն այն աղեսալի պատերազմաց
որք երկրակալութեան և վեհապետու-
թեան միայն նպատակն ունէին։ այն
սոսկալի պատերազմաց որոց նկարագի-
րըն յաճախ ուրեք կըտեսնեմք պատ-
մութեանց արիւնռուշտ էջերուն մէջ
երբ միևնոյն հօրէ և մօրէ սերեալ բայց
իրարմէ անջատեալ ժողովուրդք միմ-
եանց արիւնը թափելով դալարազարդ
մարդերն կըկարմրեցնին, այն վայրագ
պատերազմաց բուն իսկ շարժառիթն
ի՞նչ էր։ եթէ ոչ տգիտութիւնը։ Այո՛,

ողխուութիւն սիրոյ և արդարութեան մէջ, որ ատելութիւն և թշնամութիւն կը ցաներ. ողիտութիւն պարտուց և իրաւանց մէջ որ բռնակալութիւն և թշնառութիւն կը քաշեր և առիթ կուտար այն անիրաւ և բարբարոս կռիւներուն։ ։ ։

Բայց միւս կողմէն քանի որ ժամանակը յառաջ կերթար գիտութեանց լոյսն ալ տակաւ առ տակաւ կը նշուլեր մարդկութեան մառախլապատ հորիզոնին վրայ, տկարութեան, լուսաւորութեան և կրթութեան գաղափարք օր քան զօր կաճէին և կատելնային և իրաւանց ու պարտուց ղղացումը քիչ քիչ թագաւորել կսկսեր կատաղի արտերու վրայ, և ժամանակ էր, որպէս զի իւր տիրոջմէն ընդվզեալ և մոլորեալ մարդկութիւնն վերջապէս հաշտվեր իրեար հետ և ուղղութեան ճամբուն մէջ մտնէր։ Եւ ահա Բանն միածին, երկրիս վրայ խաղաղութեան և եղբայրութեան այս

ամենամեծ միջնորդն այս ամենաբարձրեալ վերկին երևեցաւ 1872 տարի յառաջագոյն։

Ս. այս միջնորդն էր որ երեսուներեք տարի աշխարհի վրայ կենալով եղբայրութեան, հաւասարութեան և ներողութեան հիասքանչ տիպար մը հանդիսացաւ. որ արդարութիւն և ճշմարտութիւն քարոզեց յար. որ մարդկային խիղճը նկարեց և ելոյց իւր սոսկալի խայթերով, որոց ոչ ոք կարէ արդարանալ դիմադրել, ըսել կուզեմ մարդկային սրտերուս մէջ ընդ երկար ննջող խղճմտանքն արթնցուց։

Հեղութեան և խոնարհութեան, ազաքինութեան և Աստուածպաշտութեան շաւիղներէն ընթացաւ և զմարդիկ ալ իւր շաւիղներուն հետեւելու հրաւիրեց, այն շաւիղներուն որ ի ճշմարիտ կեանս կը հանեն զմարդ։

Եւ սակայն այս ամենաբարձրեալ միջնորդն որ զԱստուած ընդ մարդկան

հաշտեցնելու համար իւր փառաց բարձունքէն յերկիր իջած Սգամայ սերունդը ի խաւարէ ի լոյս ճշմարտութեան կը կոչէր և մարդկային ցեղին փրկութեան և բարեբաւութեան համար կը աքնէր. խումբ մը խաւարասէր խելագարներէ նախատուեցաւ. որք չը ճանչելով կամ ճանչել չուզելով զնա՝ անարգեցին, տանջեցին, չարչարեցին և վերջապէս խաչելութեան փայտին վրայ բարձրացուցին այնպիսի փրկիչ մը, որ մարդկային ազգի փրկութեան և բարեկրթութեան համար կաչխատէր: Բայց նորա խաչելութեամբն ևս քան զևս տարածեցան իւր վերկարաբ ակղբունքներն և մարդկային ազգի քաղաքակրթութեան գործն յառաջ տանելու նպաստեցին: Յիսուսի քարոզութիւններով քիչ քիչ մարդկային կատաղի բարբարոսութիւնը մեղմիլ և ամոքիլ սկսաւ և նոսաղեցաւ այն անյագ ծարաւն մարդոյ իւր նմանեաց արիւնը թափելու և քամելու մա-

սին: Եւ վերջապէս եկած հասած եմք այնպիսի դարու մը, յորում զատերազմի անունը լսողին անգամ սարսափ կազդէ, և հաշտասիրութիւնը գրեթէ ամենն ժողովրդոց անշուշտ բաղձանքն է: որչափ որ ալ քանի մը վեհապետք դեռ իրենց միջնադարեան վայրագութեանց մէջ կըսիրեն շարունակել. և անցեալ ժամանակաց արիւնոտ տեսարաններն վերստին հանել աշխարհի աչաց առջև:

Բայց հոգ չէ, սիրելիդ իմ Յիսուս քանի որ քրիստոնէութեան հաշտարար ընկերութեանց տարածմամբն մարդկային ազգի քաղաքակրթութիւնը յառաջանալու վրայ է, այն կենսատու սկզբունքները՝ որ ընկերականութեան բուրաստանէն սակաւ առ սակաւ ատելութեան, անգրագիտութեան և անիրաւութեան որոմները ընկելով՝ սիրոյ, գրագիտութեան և արդարութեան սերմունքն կըսերմանեն, որոնք միայն մարդկային ազգի վերանորոգիչները պիտի ըլլան:

Միւս կողմանէ ալ քանի որ դիտութեանց և բարեկրթութեան սէրը օր քան զօր կը ծաւալի և քանի որ բարեսէր ծընողք երէնց զաւակները մտաց պերճութեան և բարոյականի կրթութեան մէջ մեծցնելու փոյթն ունին, անտարակոյս է որ մարդկութիւնը կերպարանափոխ պիտի ըլլայ, անցեալին սրտամրմնջ գործերէն ալ դաղար պիտի առնուն. խաղաղութիւնը պիտի թագաւորէ աշխարհի։ Ս. հաւատիկ, աղնիւ Յեսու, մեր ապրած ժամանակին քաղաքակրթութեան արևը որ զարդիս աղօտ և նորածագ տեսիլ մը ցոյց կուտայ։ բայց պէրելի է ինձ ապահով ըլլալ թէ քիչ մը յետոյ համայն ընկերութիւնը լուսաւորել պիտի զօրէ այսու հաշտասիրութեան և դիտութեանց սերոյ ընթացքով։

Հոս քիչ մը ձեռք առնումը նախնեաց պատմութիւնը նշմար մը ձգելով հին դարուց և հին ազգաց վրայ։ Ո՜հ, ի՞նչ յաւալի յիշատակ, որ ժամանակաւ աշխարհի առջև յառաջադէմ և քաջարի հանդիսացող ազգաց հիմա պատմական յիշատակաց մէջ չոր անունները միայն կը տեսնուին. ինչպէս են ազգք Հռովմայեցւոց, Փիւնիկեցւոց, Սպարտացւոց այլովքն հանդերձ։ Ո՞ւր են այս ահեղ և մեծազօր ազգերն, որ ժամանակ մը զաշխարհ կրսասանեն եղեր — կործանման փլատակներուն տակ։ Բայց ինչո՞ւ այսպէս անկարծելի անկումով իրենց մեծութեան բարձունքէն վար կը գլին։— Ս. սոր սա պատճառը միայն կրնամ տալ, վասն զի իրենց ազգութեան հիմունքն չհաստատեցին մտաց մշակութեան և սրտի կրթութեան հաստատ վիմաց վրայ այլ նախամեծար սեպեցին զինաշարժութեան, արեան հեղման և պատերազմական աւերածութեանց խախուտ աւազուտին վրայ կանգնել։ Որպիսի ատելութեամբ կընայէին օտար ժողովրդոց վրայ և ի թշնամութիւն կը դրդռուէին. ուստի միշտ պատերազմային արիւնալից

յաղթանակներ ձեռք բերելու տենչով սպառեցին իրենց մեծութիւնը, ուժը և կենդանութիւնը, փոխանակ զի ևս առաւել շատացուցեալ կըկարծէին. բայց մըտաց և սրտի կրթութիւն չկար։

Բայց մինչդեռ արդեան ժամանակիս մէջ գիտութեանց լուսով կըլուսաւորին մտքերը և կըկրթուին սրտերը. էն յետին և անծանօթ ազգերն կարճ միջոցի մէջ կըյաջողանան բարեկամութեան և բարգաւաճանաց աղաստ ասպարէզին մէջ ինչպէս են, Ամերիկացիք, Գերմանացիք Գաղղիացիք։ այլովքն հանդերձ։

Հիմա բաղդատենք իրեար հետ այս երկու հին և նոր ազգերն, Սպարտացին և Ամերիկացին. ինչ մեծ տարբերութիւն և հեռաւորութիւն իրարմէ։

Սրդարև առաջինն իւր ֆիզիքական կարողութեան յենլով անցեալն իւր քաջագործութեամբ որոտացուցած է. բայց ժամանակի շրջանին մէջ յանկումն դատապարտուած։ Բայց երկրորդն, Ամե-

ռիկացին, միայն իւր ֆիզիքական կարողութեանց չենայիր. այլ դիտութեամբ և կրթութեամբ կուզէ իւր ապագայն ապահովել։ Գիտէ որ ո՛րչափ անգին է ժամանակը. ուստի ինչ որ օգտակար և անհրաժեշտ կարևորն է կըհնարէ շատապաւ գործելու համար. և առաւել լաւ գործելու համար կըմիացունէ իւր աշխատութեանցը մտաց կարողութիւնները։ Կըյօրինէ այնպիսի գործիներ, որոց վրայ կենդանութիւն առած կերևին գործունէութիւնը, արագութիւնը և ճարպիկութիւնը։ — Իմաստութեամբ կը շարժի, իւր գրօշակին վրայ (ինչպէս նաև արդի ուրիշ լուսաւորեալ ազգաց) Հաւասարութիւնը, Ազատութիւնը և Լուսաւորութիւնը գրած է։

Բայց ամեն բանէ առաւել կըյուզէ դաստիարակութեան կենսական խնդիրը և կըյարուցանէ այնպիսի հանճարներ, որ իրենց հեռատեսութեամբն և գործունութեամբ երկրին կամ ազգին երջանիկ

ապագայն կըպատրաստեն և այնպիսի ճարտար արհեստագէտներ՝ որ օրըստ օրէ ուրիշ ազգաց առջև մեծ յարգ և փառաւորութիւն կըստանան։

Յիրաւի ազգի մը ապագայն, երջանկութիւնն և բարգաւաճումն, ո՛չ զէնքերը, ո՛չ թնդանօթներն և ո՛չ պատերազմական փողերու ընդ միշտ հնչումներն չեն կարող ապահովել. որչափ որ ԳԱՍՏԻՊԱԿՈՒԹԻՒՆ։

Ս. Հա՛ այս է ազգի մը կենդանութեան և յառաջադիմութեան անժխտելի պայմանը։ Պէտք է կրթութեամբ կատարելագործել մարմինը և՛ միտքը և՛ սիրտը։ Հին ազգեր այս երջանիկ ընթացքն չը բռնէին։ Պատմութեան վկայութեամբն կը սովրիմք նաև թէ, վերոյիշեալ հին ազգերն սքանչելի արիութիւն և հայրենասիրութիւն ունէին. այո, բայց ափսո՛ս որ իրենց այդ եռանդուն ղդացմանց մէջ խոտոր քայլելով՝ մեծապէս կսխալէին։ Քանզի ճշմարիտ հայրենասիրութիւնն և

արիութիւնն ո՛չ թէ օտար ժողովուրդներըը կամ ազգերը յաղթելու և նուաճելու վրայ կայացած է, այլ հայրենեաց մէջ օգտակար և իմաստուն օրէնքներ, շահաւէտ ախատութիւններ, ծառայութիւններ, բարոյական սկզբունքներ և ընկերսիրական գործեր տարածելու և հաղորդելու մէջ է։ Քաղաքակրթեալ ազգեր և ողջամիտ անձինք կզգան զասանք և մեծ վոյթ ու բաղձանք ունին, որպէս զի մարդկութիւնն իւր փառքը և մեծութիւնն դիտութեանց և բարւոք կրթութեան լայնաձիգ ասպարէզին մէջ որոնէ։ Մեր ազգած ժամանակն ալ այս լուսաւոր դաղափարները կը ներշնչէ մեր մեջտեղ. ուրեմն պէտք է, որ ամենեսեակ կարեւոր դիտութեանց մէջ մարդելով՝ բարձրանամք մեր մարդկային արժանեաց մէջ յառաջ անդը՝ և կատարելութիւն։

Ս. Յո՛, սիրելիդ իմ Յեսու, պէտք է որ երիտասարդութեան թերեւսաբիկ խա-

ղերը և երգերը մեկդի ձգեմք , բոլոր վայրապար զբօսանքներու հրաժեշտ տամք և պիտանի ուսմանց դիտութեանը պարապելով՝ յօգուտ մեր ազգի և յօգուտ մեր հայրենեաց աշխատիմք օրինակ բռնելով մեզ ազգիս առաքինի և վեհապանծ Ս. Նախնեաց գործերն . որ իրենց խնամատնազեղ մտքերն յօգուտ և ի կրթութիւն իրենց ժամանակակից Հայ Ժողովրդեան կ'գործածէին , և մինչև անդամ իրենց ժամանակաւոր կեանքն , փառքն և դոյքն կը զոհէին առ սեր յետագայից ազգին և մանաւանդ առ սեր կրօնից անդուլ կաշխատէին :

Ոմանք քերթողահաբք , ոմանք թարգմանիչք , ոմանք խնամատարքք և ոմանք պատմիչք առաւել ազգային կրթութեան և կրօնից զարգացման համար ճգնելով աշխարհադղորդ ժամանակին ահարկու ժանիքներէն անծախ պահպանեցին մեր ազգութիւնը : Երկանի՛կ հեռատեսութիւն . որուն արդիւնքն այն եղած է ,

որ Հայութիւնը առաւել իւր կրօնից մէջ կիրթ մնալով մինչև այսօրս կեանք ունի աշխարհի վրայ , մինչդեռ մեր ազգին ժամանակակից ուրիշ ազգերն փճացան և անհետացան : —

Աշխատինք ուրեմն ի՛մն Յեսու ազգային կրթութեան և բարօրութեան օգնեմք , և ինչպէս որ մեր Աստուածասէր և հայրենասէր Ս. Նախնիքն ի կենդանութիւն և ի փառս ազգի կըտքնէին , մեք ալ , այդ նախնեաց շառաւիղներ , վատութեամբ յեսս չըկասիմք ի սիրոյ սուրբ կրօնից և ի սիրոյ հայրենեաց :

պահ մը մեր գործերն կ'ծածանէ և կ'անյայտէ։

Կա՞յ աշխարհիս վրայ մարդ մը, որուն սրտէն փառասիրութեան մուխը չ'մխայ, և որուն բովանդակ կեանքն ու գործերն ժամանակի շրջանին մէջ իբր վաղացնդ իկ ծուխ մը չելլան։

Երբ խորասուզեմք մարդուս ներսիդին իւր գործերուն վրայ մանրազնին աչք մը պատցունելով, ակներև պիտի դանեմք որ փառասիրութիւնը իւրաքանչիւր սրտի մէջ ալ կ'վառի։ յոմանս առատ խիտ և թանձր, յոմանս չափաւոր յոմանս նուազ, բայց և այնպէս իւրաքանչիւրին ալ դուրս կարձակի։ Փառասիրութիւնը բնածին է ի մարդ։

Բայց ուսկե՞ց կգոյանայ այս մուխը, և ինչ՞ նիւթ է այն, որ կվառէ, կբորբոքէ, կծխայ և ապա մոխիր կդառնայ։ Այս բոցեղէն նիւթը (եթէ արժան է այսպէս ըսել) մեծութեան և արժանեաց համար անզսպելի բաղձանքն է, անհատնում

ՆԱՄԱԿ Դ.

—

Մարդուս փառասիրութեան կիրքը. մոլի փառասիրաց աղէտալի գործերը. գովելի փառասիրի մը նկարագիրը. յորդորանք առ բարեկամիմ։

—

Սիրելիդ իմ Յեսու.

Ի՞նչ է այն խիտ ու թանձր մուխը, որ մեն մի սրտի ծխնելոյզէն կ'ծխէ, վեր կ'արձակի վայրիկ մը հազիւ կըշրջի հովին մէջ և կ'ցնդի կ'անհետանայ։

— Այն թանձրամած մուխը փառասիրութիւնն է, այն ծխնելոյզն սիրտն է մարդոյ, և այն հովը, յորում կ'շրջի և կ'անհետի, ժամանակի շրջանն է, որ

և անլրելի իղձ մը, որ անդադար կ'զոյանայ մարդկային սրտի վառարանին մէջ, մինչև այն յետին վայրկեանն՝ յորում դադրի թափառել և խոնարհի ինչնայ ան հողին տակ։

Կան տեսակ մը մարդիկ, մանաւանդ զրուած անցեալին պատմութեան մէջ, որ մեծութեան և փառայ տենչանքն առաւելապէս աճեցնելով իրենց սրտերուն մէջ, բաղում չարեաց պատճառ եղած են և կըլլան։ զոր օրինակ այն անզուսպ փառասէրներն, որք նետուելով պատերազմի դաշտին վրայ, բիւրաւոր մարդոց արիւնը կ'հեղեղեն, ուղելով այլոց վրայ տիրապետել, լալենից և ողբոց դռներ կ'բանան, ժողովրդոց գրկէն, ընտանեաց ծոցէն կ'բառնան հանդիսան և անդորրը, և սրատմրմռք վիշտեր կըփռեն մօր և որդւոյ, հարսին և տեսայի, եղբօր և բարեկամի մէջ, որոց դէմքերն թաղծութեամբ սխրանալով ցնծութեան ժպիտներու կը փոխանակին արտասուք վշտաց։ Եւ ա-

մեն այս ցաւալի պարագայներով կըտեսնէին փառք ժառանգել, մեծ մարդ ըլլալ և այլոց զարմանքն և սքանչացումը շահիլ ի՞նչքան մեծ սխալանք։ Միթէ այսպիսին և մոլի փառասիրութեամբ կոտորելն ընտանիս՝ փառ՞ք է։ Միթէ երկաթի սուրերն մարդկային արիւնամ ներկելու վայրագ փափաքը՝ փառ՞ք է։ Միթէ բռնութեամբ և տիրապետութեամբ ժողովրդոց վրայ ծանրանալն՝ փառ՞ք է, մեծութի՞ւն է.— ոչ, ոչ, ապագային զաւակները փոխան այսպիսի դիպաց վրայ զմայլելու և հիանալու առաւել գորովանօք կը գթան կամ առաւել զայրալիր կը դատապարտեն զանոնք, որ ընկերական մարդաւայել վարմանց անհամաձայն գտան յաշխարհի, և առանց ընկերութեան մէջ օգտակար գործոց յիշատակ մը թողլոյ մեկնեցա՛ն զացին։

Ա. հաւասիկ, երբ անցեալին պատմութիւնը կըթղթաւեմք տեղ տեղ կըպատահինք այնպիսի մարդոց. որ առ ի տենչ

ղաւռաց միայն կառաղի արշաւանօք կո-
ղոպտէին զԺողովուրդս և բազում աւերա-
ծքս դիզէին։ Աւա՛ղ անոնց խօլութեանը
ի՞նչ արդիւնք ունեցած են փառաց և
մեծութեան այդ յոռի ճիգերն.— ժա-
մանակին մշտահոլով անիւը զանոնք ան-
խընայ վարեցի կոխուստ, որոց շատերուն
ահիւնը աննշանութեան մէջ թաղուած
և շատերն ալ արդ ատանաց արժանի
յիշատակներ ժառանգած են։ Ի զո՛ւր
ուրեմն գոռացին, որոտացին, հրամայե-
ցին, իշխեցին, տիրացան. ամենախոր վիհ
մը, գերեզմանը վերջապէս իրենց առջև
բացուեցաւ, յորում թաւալելը վիժե-
լով իրենց մարմինը որդերու և օձերու
ուտեստ հայթայթեցին։ Եւ ի՞նչ ունայ-
նութեամբ անցաւ այդպիսեաց կեանքը,
ի՞նչ արդեօք շահեցան. փառ՞ք, մեծու-
թի՞ւն, համբա՞ւ. սև մուխեր, որ անարդ
և անիծեալ յիշատակնե՛ր թողած են։
Ո՛հ, քանի՛ անցաւոր և ընդունայն է այդ-
պիսի փառքն և մեծութիւնը։

Ճշմարիտ փառքն և մեծութիւնը
պէտք է բարեգործութեանց և առաքի-
նութեան մէջ փնտռել և ոչ թէ այն ա-
ղետալի միջոցներով ստանալու ջանալ,
որ աւելի ցնաս քան թէ շահ կը գործեն
մարդկային ընկերութեան, և աւելի ա-
նոր վրդովումն քան թէ խաղաղութիւնը
կը պատճառեն։

Ը՛հ՝ ինչ սիրելի իմ Յեսու, երբ
անցեալն պատմութեան մէջ այնպիսի աշ-
խարհակալ փառասիրաց նկարագիրն և
արիւնռուչտ գործերն կընչմարես, որ
լոկ իրենց իշխանութիւնն կամ բռնական
տիրապետութիւնն ընդարձակելու հա-
մար՝ ժողովուրդներն պատերազմի ա-
ղէտներով կը հարուածէին, ասոնք դիտ-
ած ժամանակդ սիրտդ չը՞փղձկիր. չէ՞ս
ըսեր թէ Ամենակալին տարգեալ, իրենց
կեանքը արդիւնաւոր և նուիրական գոր-
ծերով զարդարելու տեղ՝ ինանիր վատ-
նած են և իրենց քայլերուն սև՛ հետքեր
դնելով անցած իբրև զփոշի։ . . .

Բայց թողում.ք այս մոլի փառասի-
րայ աղէտալի յիշատակն և անցնիմ.ք դո-
վելի փառասիրի մը նկարագրին։ Այս
անձը թէպէտ աննշնութեան մէջ ծնած
և իւր մանկութեան օրերը խեղճութեամբ
և չքաւորութեամբ անցուցած է, բայց
այսօր երեկուան այն խեղճ մանուկը
փառաւորեալ և մեծացեալ կերևի։ Ե-
րեւակայէ անդամ մը, տես ի՞նչ օգան-
չելի վեհանձնութիւն մը իւր վրայ կը
փայլի. ի՞նչ պարկեշտ խոնարհութիւն
դիմացը վրայ տպաւորած է, որ իւր մե-
ծութեան և փառայ վրայ ոչ սակաւ շուք
կը յաւելուն։ Կըլռեմ ես, որպէս զի ին-
քըն խօսի. իւր պերճախօս լեզուն բա-
ցատրէ մեզի ճշմարիտ և գովելի փառայ
աղբերակունքը։

Այն ցաւալի վայրկենին, կրսէ, յո-
ղում աղքատիկ մօր մը արդանդէն այս
վշտայ հովտին մէջ եկայ, ինձ հետ ոչ
ուրիշ բան մը բերի, բայց եթէ մերկու-
թիւն։

Թշուառութիւն և աղէտք ծնած
վայրկեանէս ինձ հետ ընկերացան և տա-
ռապանքն ու չքաւորութիւն ընդ երկար
լեցին զիս։ Սակայն ես քանի յառա-
ջանայի կենաց շաղին մէջ, խրախուսան-
քըն և քաջասրտութիւն ինձ հետ կ'ա-
ճէին ընդդէմ այն յուսահատիչ պարա-
դայից, որ վհատել կուզին զիս իւր
տառապանաց մէջ։ Բայց յուսահատու-
թիւնը շատ հեռի էր ինձմէ. քանզի լա-
համոզուած էի թէ, ուրիշ կերպով չեմք
կարող աշխարհիս վշտայ դիմադրելու,
բայց միայն ամենքին ալ հանդուրժելով
և քաջալերուելով։ Տարինե՛ր անցան։
Եւ երբ բանականութիւնն և ողջամիտ
խորհրդածութիւնն ի յիս զարգացան,
այն ատեն բաւական կրցայ խելամուտ
ըլլալ թէ այս աշխարհի վրայ մեզ նման
մարդիկ մերկութեամբ կուգան, մերկու-
թեամբ կապրին և մերկութեամբ կրխուս-
տին ընաւ չբթողով արդիւնաւոր
գործեր. և ի վերջոյ երենց վրայ կընդ-

դունին սա իրաւացի վճիռը. «լաւ էր մարդոյ աննշանի վիժել քան զարև տեսանել»։ Ուստի ամենաբարձր ճիգով մը համակուած՝ չուզեցի այս վճռոյն տակ իյնալ, զոր դիակիս վրայ դուցէ կարդային։ Հաստատամտութիւնը ինձ ղէնք առի, աշխատութիւնը ձեռքս գործիք ըրի և բանավարութիւնը իմ ընթացից առաջնորդ բռնելով այսպէս անձս նետեցի կենաց ճամբուն վրայ։ Կամ այն է որ վայրէն ճամբայ մը պիտի գտնեմ կամ ես իմ ժրութեամբս պիտի փութամ պատրաստել, կամ մահ կամ կեանք նշանաւոր. կամ փառք և մեծութիւն ցանկալի, կամ անարդ վախճան և նսեմութիւն ըսի և անվեհեր յառաջ քայլեցի ուսմանց ասպարէզին մէջ զի պատանեակ էի դեռ։ Եւ սակայն գոհութիւն երկնից, որ այսօր իմ աշխատանաց և ջանից պտուղը կըվայելեմ. այս վիճակը, որ ինձ մոռնալ տուած է առջի քաշած տառապանքս և աշխատութեան,

ցըս հոգնութիւնները։

Ա.հա ազնիւ Յեսու. այս անձը մեր ժամանակին ազգային և քաղաքական գործերու մէջ բարձր աստիճանի մը պաշտօնը կըվարէ։ Ինք աննշան տոհմի մը նշանաւոր զաւակն եղած է ի շնորհս հաստատամտութեան, ջանից և աշխատութեան։ Ա.յս անձը թէպէտ՝ ի սկզբանէ փառաց փափաքեցաւ և իր փափաքածին ալ հասաւ բայց իւր արդիւնաւոր աշխատութեամբն և այսօր ալ իւր կեանքը մասամբ հանրութեան օգտին կընուիրէ (*)։

Ա.հա փառասիրութիւնը եթէ գովելի կէտ մ'ունի, այս տեսակին մէջն է։ Ա.յս օրինակ փառասիրութիւն մը աւելի պատուոյ քան արհամարհանաց արժանի

(*) Չեմ ուզեր յանուանէ կոչել այս անձը վասն զի իմ միտքս աւելի սկզբունք բացատրել է և ոչ թէ պատմական ներբողներու մէջ դնելիս։ Կը ձգեմ որ անոր գործերը հոչակեն իւր անունն և փառքը։

է։ Երբ կուզեմք որ անանցանութեան մահէն զերծանիմք, փառաւորիմք պէտք է յոգուստ հանրութեան և ի շահ ընկերակցութեան աշխատելէ չքթուլնամք։

Անէնուէր ըլլալ ջանամք և ի հարկին մինչև անգամ մեր կեանքը ընկերաց սիրոյն և օգտին նուիրելէ չքխրտիմք. վասն զի (ինչպէս ճարտար գրիչ մը ըսած է) ուրիշ բան չէ անէնուիրանքը, բայց եթէ ուրիշին համար ապրելու դիւցազնութիւն մը։

Բայց եթէ առանց այս գովելի բարեմասնութեանց հետևելու, ընկերաց սիրոյը կեղեքելով և վնասելով ևոր ինչ գեղեցիկ է ի չէն նոցին բարեբաղութեան, նորա աւերածին և յետամնացութեան ջանալու ժպրհիմք, ոչ, ասի փառք չէ, այլ վայրենութիւն. և այն ատեն մահն առաւել գերազանց է քան զայդպիսի կեանս, քան զայդպիսի բնական վայրենութիւն, որ առիթ կուտայ հասարակաց հեղուլ իւր անէծքն

մեր գերեզմանաց, փոխանակ դի օրհնութեամբ և մաղթանօք պիտի օծէին զանոնք եթէ մեր մարմիններն ինչնէին հոն բարութեան գործերով պարուսեալ։

Այո, այո. կրնամք այդ բաղդին, օրհնութեանց, բարի և անմահ յիշատակաց արժանանալ, երբ մարդկային պարտաւորութիւններս կատարելով օգտակար և անէնուէր անդամներ ըլլամք մարդկութեան։ Բայց եթէ այն փառասիրութեան համար մեր նմանեաց աւերածին կամ չարիայը պատճառ ըլլամք, աղէտալի պիտի ըլլայ մեր կեանքն և մահը և փոխանակ բարի յիշատակաց՝ անիծից և դառնութեանց յիշատակ մը կամ անշուք և անարգ մահ մը պիտի ժառանգեմք։

Միթէ ամեն այս ըսածներուս օրինակնե՞ր կըպակսի։ Ահա պատմութիւնը կանգուն կեցած է, անցեալ դիպուածոց և պարագայից հաւատարիմ աւանդապահն այն ծերունին բաղմադարեան։ Տես քանի՛ իշխանազուններ, թագաւոր-

ներ կամ վերհապետներ կընդերկայէ մեզ, որ ի հեշտանս, ի մեծամտութիւն և ի փառամոլութիւն համակեալ կորան նուաստութեամբ։

Ընդհանուր պատմութիւնը զանց ընելով մեր ազգայնոյն վրայ ակնարկ մը ձգեմք։ Տե՛ս զՆեփրովիմն Բէլ, զայն հէք ըզձորդն Աստուածային փառաց, զի՞արդ անարգաբար յերկիր թաւալի ի ձեռն դիւցազին Հայկայ, որ ի վրէժ վառեալ Աստուածպաշտութեան հարկանէ աղեղամբն և բառնայ ի բաց ի միջոյ (*)։

Տե՛ս և ապա զՎասակ իշխանն Սիւնեաց. փառաց և հեշտանաց պատիր յուսովն շլացեալ՝ զի՞արդ զհայրենիս և զազգն ևզեկեղեցին առոտն կոխէ, և ըզհայութիւն օտարին կամի մատնել. ա՛ւաղ հէքութեանն։ Բայց պարսկական խոր և մթին բանտէն սրդնոտեալ դիակ

(*) ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ. Սկիզբն Պատմ. Հայոց

մը կելնէ, որ Վասակայն է, տե՛ս քանի՞ վրէժխնդիր է Արդարութիւն, որ ամենթապարտ առնէ զնա օրըստօրէ իբրև ըզդէշ ի հրապարակին արկանելոցն (*)։

Տե՛ս և զայն ահագին վերադն Հոզեփեռնէս զզօրագլուխ զօրացն Ասուր որ աշխարհակալութեան խորհրդով Նաբուգոդոնոսորայ կողմէն կոգայ կըպաշարէ զքաղաքն Բեթիզուա և ժամէ ի ժամ կըսպասէ Աստուծոյ ժողովրդեան անձնատուութեանն, զի՞արդ ի ցանկութիւն և հեշտութիւն ցուցթայ արբեցեալ յստուերի մթութեան մատնէ զկառափն իւր։ Եւ ի՞նչ զարհուրելի տեսիլ յորժամ աչք զօրացն նկատեն զելուս զլխաւորին իւրեանց օգտածածան բարձրացեալ և զի՞արդ ի մահաբերութիւն թմրութենէ արբեցութեանն յոր ի զ և ի սակուն համակեալ յետս յետս խուսանեն

(*) ԳԻՏԷ-ԳԱՄԴԵՊԵՏ. Պատմ. վարդանանց պատերազմի

հապեն (*) : Աստոյ նման քանի՛ անհամար օրինակներ կաւանդէ մեզ պատմութիւնն ի վերայ անյաղ փառասիրաց, սեղ և հպարտ հեշտամոլաց և ամբարտաւանից որ նոյն իսկ շատերուն բերնովը լսուած է այս եղկելի հառաչանքը, Ա՜՜ղ ֆոտոյը ան՝ցա՜՜ոլ :

Դարձեալ կ'ըսեմ, սիրելեալդ իմ Յեսու. արհամարհեմք այնպիսի փառքն և մեծութիւնն, որ այլոց զրկանք կամ չարիք ընելով կը ստացուի : Հեռի կենանք մոլի փառասիրութենէ որ միշտ աղետալի է, այո՛, զձուռ մուրացկանի նման հետամուտ չըլլամք փառաց : Բայց որովհետև փառաց ու մեծութեան այս բաղձանքն ընդաբոյս աննուաճելի ընութիւն մ'է մարդուս, որովհետև պատուոյ և փառաց համար միայն կ'ապրիմք, ապա զայն ստանալու համար պէտք է նախ և յառաջ առաքինութեան հետա-

(*) ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ, դիրք Ցուդիթայ

մուտ ըլլալ և գործել ինչ որ այլոց բարի է, կատարել ինչ որ մեր նմանեայ կը պարտաւորիմք, միով բանիւ, միշտ ըզդոյշ մնալ մոլութեան և անբարոյականութեան արատներէն. այն ատեն պիտի տեսնեմք որ պատիւ, արժանիք և փառք ինքնին առ մեզ կը դիմեն և զմեզ կը բարձրացունեն :

Ահա՛, եթէ աշխարհի վրայ ճշմարիտ և վայելուչ փառք ստանալ կուզեմք, այս կերպով կրնամք գտնել զայն. այս ահմանէն անդին եղած փառքն գովելի չէ երբէք : Անիկա չարաղէտ փառամոլութիւնն է, որուն անհամար օրինակներն կը գտնեմք պատմութեան լայնածալ էջերուն մէջ, և որուն հետևութիւնքն միշտ թշուառութիւն և աղէտք եղած են :

Պատմութիւնը մեկ կողմ դնելով նոյն իսկ արդի ընկերութեան վայ ուշադիր նայուած մը ձգեմք. քանիներ կը տեսնեմք, որ այլոց բարօրութիւնն և

խաղաղութիւնն իրենց փառասիրութեան զոհ կ'ընեն։ Կրսիրեն փառաւորիլ. բայց ուշ չդնեն թէ՝ փառք ստանալու միակ միջոց այլոց բարիք ընելն է։ Պատուոյ, մեծութեան և արժանեաց ետևէն կըվազեն. բայց արժանավայելուչ գործերէ զուրկ են։ Այսպիսիք ո՛րչափ արհամարհանաց արժանի են իրենց փառամոլութեամբ։

Ե՛կ ուրեմն ի՛մ Յեսու, այս օրէն առաջադրութիւն մը ընենք, որ միշտ անձնուէր պիտի ըլլամք, յօդուտ մեր նմանեաց, յօդուտ և ի չէն մեր տառապեալ եղբարց։ Ուխտեմք որ առաքինութեան արի զինուորներն պիտի ըլլամք միշտ մարտնչելու ընդդէմ մոլութեանց, որ մարդուս վրայէն մարդկութեան արժանիքն կը կողոպտէ և աշխարհի վրայէն կը բառնայ ընկերական երջանկութիւնը։ Վարձադրէ այն ատեն ալ պէտք չէ որ խոնարհութիւնն ալ ձեռքէ լքանիմք։

ՆԱՄԱԿ · Ե։

—

Երջանկութեան գաղափարը. աշխարհի անկատար երջանկութիւնները. մեր վիշտերուն ամենամեծ դարման. Մարդուս պարտաւորութիւնքը. ճշմարիտ և իրական երջանկութեան շաւիղը։

—

Սիրելիդ իմ Յեսու։

Ինչպէս որ փառասիրութեան կիրքը ընդաբոյս կ'ածի մեր բնութեան հետ. այսպէս ալ երջանկութեան գաղափարը անչնչելի կերպով տպաւորած է մեր մտքերուն մէջ։ Զէ՞ որ այս վաղանցուկ կեանքին մէջ մեր սրտերուն բոլոր ձգտումները, գլխաւոր բաղձանքները և մեր աշխատութեանց դիտաւորութիւնը այս կէտը կը հասնին։ Միշտ

երջանկութեան հետամուտ կ'ըլլամք. միշտ զանիկա կը փնտռենք և ասիկա կարծես մեր կեանքին անհրաժեշտ պայմաններէն մին եղած է։ Մինչև անգամ որ աշխարհի անյաւար փառքերը և մեծութիւնները կը փնտռենք, ճիշդ այս նպատակին համար է. Եւ ինչպէս ըլլա՞ւ։

Արդարև չկայ այնպիսի մարդ մը, որ մտքին մէջ երջանկութեան գաղափարը չը կրէ, և իւր կեանքին մէջ անոր փափաքով չ'աշխատի։ Հոգ չէ. դը՛նա՛ ամենէն թշուառ, տնանկ և վշտալից մարդու մը. հարցուր իրեն ինչո՞ւ կապրիս, անիկա քեզ կը պատասխանէ. որ յոյս մը ունի սրտին մէջ, որ օր մը դինքը այն խեղճութենէն պիտի ազատէ և երջանիկ պիտի ըլլայ։ Դնա ամենէն հարուստ մարդուն ալ նայէ և դիտէ իւր բոլոր ըրածները, զբաղումները, խնճդքները, զուարճութիւնները. ամենքն ալ երջանկութեան նպատակն ունին։

Ասկէ զատ, սիրելիդ Յեսու, մեր

ունեցած վիճակնուս վրայօք միշտ դրժգոհութիւն մ'ալ ունիմք. որով առաւել քաւագունին բաղձանքը կը ստանամք։ Ասյս դժգոհանքն ամեն մարդու սրտին մէջ ալ կը բնակի, ոմանց այս կերպով, ոմանց այլ ինչ կերպով, միշտ ձանձրութիւն իրենց կացութեան մէջ, և միշտ ճգտում մը լաւագունին . . . ։

Ասյպէս օր մ'ալ ես քաղաքային խառնվայրդ աղմուկներէ ձանձրացած մը-տովի կը հարցունէի, միթէ չե՞մ կրնար գտնալ այնպիսի վայր մը յաշխարհ՝ի, որ բոլորովին զերծ և ազատ մնացած ըլլայ այս հոգոց ովկէանին՝ ձանձիր տեսարանէն։ Միթէ կրսէի չգտնուի՞ր այնպիսի տեղ մը, յորում մշանջենաւոր խաղաղութիւնն թագաւորած ըլլայ, առանձնութիւնը նորա թագուհին, հաճոյքն ու բերկրութիւն նոցա զաւակունք և կենդանիները՝ թռչուններ՝ ճճիները՝ նորա պաշտօնատարներն, խխանները՝ և հաւատարիմ պահապանն ըլլան, և

դեղեցիկ դեղեցիկ տեսքերով զարդարուած հրապուրիչ առարկայք, բոյք, տունկքք և ծաղկունք՝ նորա չքեղ հպատակներն և ժողովուրդն ըլլան։

Ս.յսպիսի վայրի մը կառավարութեան մէջ կը փափաքէի ապրիլ և վայելել, բայց կուզէի սովրիլ և հասկնալ թէ ի՞նչ է այս աշխարհս և իր երկնակութիւնները։ Ուստի նկատողութիւնը ձեռք կառնուի և փորձի ասպարեզը հուսկ ապա կը ցուցնէր թէ, տառապանաց և վշտաց ձոր մ'է այս վայրը, յոր կապրիմք, յոր կոչուած եմք յոգնելու, տքնելու, քրտնելու մեկ խօսքով չարիք և դժբաղդութիւնք կրելու. չէի ուզեր հաւատալ։

Դաշտաց և բլրոց զմայլելի տեսիլը ինձի կարծեցնել կուտար թէ իրենց մէջ խաղաղութիւն և հաճոյք կը պարունակեն և ազատ են տաղտկալի աղմուկներէ. եռանդագին հոն կվազէի և վայրիկ մը ընակիչ կը լայի դալարաւետ մարգագետնոց։ Հոն ստուգիւ կտեսնէի ամէն բան դեղեցիկ նկարուած Ս.մենակարողին վրձինով, կտեսնէի ծաղկունքն՝ բուրած անուշահոտութեամբ, կլսէի թռչնոց սրտաշարժ ծաւիւնը տերևոց մէջ, կշնչէի ամառան հեղասիւք զեփիւռը, սար, ձոր, դաշտ և հովիտ յեղաշրջած, կդիտէի այն վճիտ և բիւրեղափայլ առուներու հեղիկ և դեռերու կարկաչաձայն հոսանքին։ Ս.յս դեղեցիկ աշխարհաց մէջ կյուսայի հաճոյք և բերկրանք վայելել և պահ մը իսկ վայելեցի։

Բայց անդէն սեաթոյր ամպեր երկնից երեսը պատեցին, արևուն լուսապայծառ ճառագայթներ խափանուեցան սև ու սուգ զգեցաւ համայն բնութիւն։ Երկինք որոտաց, կայծակք շանթեցին և փայլակք փայլեցան, հողմունք զբրութիւն զգեցան և ահա փոթորիկը տակնուվրայ կյուզեր այս դեղեցիկ աշխարհը, ծառեր երբեմն ի հիմանց խլէին, քիչ մը ևս յետոյ անձրևք սկսան յորդորել, որ

առ երևոյթս կեղծեր կը խանգարէր այս խաղաղութիւնը, լուութիւնը և գեղանի տեսարանները։ Ուրեմն, բսի, հոս ալ չկայ մշտնջենաւոր խաղաղութիւն, հաճոյք և բերկրանք, հոս ալ մահկանացու ականջ հանդարտ չէ՛ աղմուկներէ և յարատև հանգիստ բնաւ երբէք։

Ս.ն առեն վերստին դառնալով քաղաքային աղմուկներուն, կ'սկսէի դիտել, բայց որովհետև քաղաքային կեանքը բազմատեսակ աստիճաններ ունի, ուստի աչքս վերուցի նախ քաղաքացիութեան պինդ բարձր և վերին աստիճանին վրայ, կարծեցի թէ երջանիկ էին սոքա իրենց հարուստ ընչեղութեան մէջ, և ստուգիւ այնպէս կերևէր արտաքուստ, բայց նոյնս առաւել խորունկը թափանցեցի, և ո՜հ, չքեղ կերպարանաց և հռչակաւոր անուանց տակ ի՛նչ ներքին և անդարմանելի խոցեր ու վերքեր կ'ծածկէին, ի՛նչ ներքին բազմապէս ցաւերով կ'տանջուէին, ի՛նչ վատ կրից փոթորիկներէ

կ'յուզուէին, ուրեմն իրօք երջանիկ չէին ասոնք։ Ուստի այն վերամբարձ աստիճանաց դադաթէն դէպ ի վայր պինդ ստորինը ակնարկեցի անդամ մը, իրաւապէս խօսելով ասոնք առաւել երջանիկ տեսի իրենց ստորին աստիճանին մէջ, քան զՀարուստս՝ յիւրեանց վառաւոր վիճակին, զի սոքա, այս քաղաքացիք, միև նոյն ներքին ցաւերը և վշտերը չկրէին, նոյն ճանճրութեան, տաղտկանաց և տրուայտութեան ենթակայ չէին, այլ կապրէին ազատ, հոգատանջութիւնք արտաքսած կը խուսէր անոնցմէ, շատ ճանճրութիւն չունէին, շատ ցաւեր չքաշէին, և մոռատանջ ծանրակիր զբաղմունքէ կարի հեռաւոր էին, երջանիկ չէ՞ր այս վիճակ. — բայց այս ալ տրտունջի տեղ մը ունէր, շատ անգամ ալ կարօտութեանց մէջ կ'այրէին կ'տանջուէին, իրենց աղքատիկ կեանքը անանկ խեղճութիւններով կ'տառապեցնէր զիրենք, որ մինչև անդամ կ'զզուէին կեանքէ և հոգիէ ու

մարմինէ կ'ելլային, ուստի ասանք ալ երջանիկ չէին։ Վերջապէս որ կողմ դարձայ, ինչ առարկայի վրայ որ ակնարկս ուղղեցի ճշմարիտ և կատարեալ երջանկութիւն աշխարհիս վրայ չ'տեսայ և չըգտայ, ուրեմն կենթադրէի աշխարհիս որ վիճակին կամ ասիճանին մէջ ալ որ ըլլամք թէ՝ հարուստ, թէ՝ աղքատ, թէ՝ ճարտար արհեստագէտ, թէ՝ կոչտ բանուոր, միևնոյն հոգերու և դժուարութեանց հաւասարապէս պիտի հանդիպիմք, և մինչև իսկ այն պարագայից մէջ, յորս երջանկութիւնը լուսաճաճանչ կ'փայլի, մինին վարագոյրներ շուտ մը կը քաշուին և կը զարկեն շատ անգամ փայլուն ուրախութիւնները, յոյսերն և հրճուանքը։

Ուստի կ'ըսէի շատ իրաւացի կերպով ըսած է Սողոմոն, «ունայնութիւն, ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն»։

Ապա այս դեռափթիթ տարիքին մէջ, ողբոց արտասուք կ'հոսէի դեռա-

հասակ ընկերաց անշունչ մարմիններուն վրայ, որք քիչ ժամանակէն անյայտ կ'ըլլային սև հողին տակ։

Լի տրտմութեամբ և ծանրաթախիծ սրտիւ կը խոկայի, միանգամայն քայլելով երկրիս հողերուն վրայէն զոր երբեմն կոխեցին մեզնէ յառաջընթաց մարդիկ, և զորս յափշտակեց մոհուան գիրկը, նոյն իսկ զմեզ ալ չ'պիտի յափշտակէր մահն, մենք ալ անոնց պէս չ'պիտի հեռանամք աշխարհիս երեսէն. զայս կը խորհէի և կը քայլէի յամր՝ 'ի գետին նայելով։

Բայց իմ ոտքերուս առջև ահա բարձրացած է այն հոյակապ շէնքը, կամ ըստոյգ խօսելով հասած եմ այն սրբազան թատրոնին առջև, ուր ամեն օր կը ներկայացուի Փրկիչ Յիսուսի եղերերգը, որ տաճարն է և ամփոփարան մեր առ Աստուած ուղղած աղօթից, երկրպագութեանց և սպասարկութեանց, և որ սովորական լեզուով կ'անուանի եկեղեցի կամ

ձամ, Հո՜ն՝ խոնարհ և խի՛ստ սրտառուչ ծնրադրութիւնք առաջի Աստուծոյ, և աղօթք առ՝ի բարեյաջողութիւն գործոց, աղօթք առ՝ի փրկութիւն հոգւոց, աղօթք առ յապաքինումն ցաւոց և ախտից, և խնդրուածք սրտից անդորրութեան կը բարձրանան։

Ա.հաւասիկ հոս է, որ մահկանացուն իւր մեծ սիրոփանքն ու միսի՛ժարանքը կ՝դնէ ի վերայ այն կարեւոր ցաւոց և զրկանաց աշխարհիս, զորս բաղմիցս կ՝կրեմք դժբաղդաբար։ Ո՜հ, կրօնք հաւատք սրբազա՜ն զգացմունք, դուք էք որ կ՝մատակարարէք մարդուս սրտին ամենամեծ ուրախութիւնը, անդորրութիւնն և իրական սիրոփանքը։

Երբ հաւատացեալ մարդն բորբոքած սրբաջերմ հրոմբ Աստուածպաշտութեան ի ծունր կիջնէ արարչին առջև և իւր ջերմագին մաղթանքն հոգեւին կ՝ուղղէ առ Նորին բարձր գահոյս, ո՜հ ի՞նչ շքեղ և հիանալի տեսարան մը կ՝ընծայէ քան զայն փառամոլ մնապարծս, որ իրենց ահռելի յիմարութիւններով զաշխարհ կ՝դղրդեն և կամ որ պճնազարդ զգեստուց սեթևեթ շպարաց վրայ պարծեցեալ կիջնեն ընկերականութեան մէջ ամեն տեսակ վայրկենական և ստուերանման իրաց հետամուտ կ՝ըլլան. կմոռնան զԱստուած և կ՝մոռանան իրենց հոգոյն մեծութիւնը, իրենց մարդկութեան փառքը. և մերթ ալ անտանելի ցաւոց մէջ անյոյս և վհատեալ, մերթ անհանդուրժելի չարեաց մէջ թևակոխած բոցայրեաց, կը հառաչեն անմխիթար հոգեկան յուսոյ և անդորրութեան վրայ դաղափար չունենալով և ապա կիջնան դերեզմանի ցուրտ հողոյ վրայ, և ահա ամեն բան լմնցաւ իրենց համար։ . . Ո՜վ ամենամեծ յուսահատութիւնք, ո՜վ անմխիթար դառնութիւնք։

Ա.պաքէն միայն կրօնքն է, և սէրն առ ճշմարիտ Աստուած որ վշտաց և աղէտից մէջ սիրոփանաց և անդորրամը-

տութեան հրճուալի պատկերներ կ'պարզեն տրտմալի հոգւոյ առաջ։ Ուրեմն պէտք է միրել միշտ զԱստուած և փառաւորել յերկրի զփառաւորեալն 'ի յերկնի հայցելով միշտ ի Նմանէ զիրկութիւն հոգւոց մերոյ։ Եւ յետո՞յ. միթէ այսչափով կըմնա՞յ մեր կենաց կարգադրութիւնը և մեք երադավաղ պիտի խուսափիմք այս աշխարհէս, ինչպէս երբեմն ճգնաղդեաց հաւատացեալք յանապատս կըդիմէին. առարկելով թէ վըշտօք և ազետիւք լի է աշխարհս, և իրենց արժան է երթալ առանձնանալ և աղօթել, խոտ ճարակել անապատաց աւազներուն և քարայրից խոռոչներուն մէջ ապրելով և միայն յաւիտենական վայելից սպասել։ Այսպէս կըխորհէին երբեմն ճգնաւորք և վեհերոտութեամբ դէպ 'ի լեռները կըդիմէին աշխարհիս երեսէն. ո՛չ, ո՛չ, պէտք չէ անոնց ըրածին հետևիլ և չպիտի հետևինք. քանզի Աստուծոյ հաճելի եղող գործը ոչ թէ այն

մշտամռունչ աղօթքներն են, որ կ'ըլլան դատարկապորտ առանձնութեան մէջ, այլ բարեգործական աշխատութիւններն և պարտականութեանց կատարումն։ Որովհետև Աշխարհի Ամենաբարձրեալ Փրկիչն ալ այս՝ սովրեցուց մեզի։

«Ունայն է, աշխարհէ աշխարհս» ըսելով ինք լերանց ճանապարհը չ'բռնեց, այլ ընկերականութեան սահմանին մէջ ի՛նչ չարիքներու և դժբաղդութեան որ հանդիպեցաւ, համբերեց։ Հարտոկաց ամենքին ալ. և մեզ ալ նոյնը ընել պատուիրեց, և դնա՞ց յանմահութիւն։

Եւ արդ ուրեմն պարտինք ուշիուշով նկատողութեան առնլով մեր մարդկային պարտաւորութիւնքն, որ կրձգուին առ Աստուած, առ նմանիս և առանձն, փոյթ տանիլ անթերի կատարելու զանոնք։

Մեր առ Աստուած ունեցած պարտաւորութիւններս դն է, որ թէ՛ յաջողութեանց մէջ և թէ՛ ձախողութեանց

մէջ, թէ՛ վայելից մէջ և թէ՛ վշտաց մէջ, չըմոռանալ զինքը. և միշտ իրեն դիմել աղօթիւք և օրհնաբանութեամբ։ Վասն զի մարդկային սեռին նպատակն ալ յայս կընայի. — Փառաւորել զԱստուած յերկրի։

Ա.ռ ընկերս ունեցած պարտքերնիս ալ այն է, որ իւրաքանչիւր ոք իբրև մարդկային ընդարձակ դերդաստանի զաւակներ պարտիմք աշխատիլ մեր պիտոյից լրութիւնը մատակարարելու համար, և այսպէսով կըտեսնեմք որ հանրութեան նկատմամբ ըրած աշխատանքնիս, նոյն իսկ մեր բարօրութիւնը կը պատճառէ, և մեզի մխիթարանք կը հայթայթէ այս վշտաց ձորին մէջ։ Զի ընկերականութիւնը կընմանի շղթայի մը, որոյ մէն մի օղակներն են անձնիւր անհատից ուրոյն ուրոյն գործերն և աշխատանք, որ 'ի մի ձուլին և կը կաշկանդուին։ Երբ ես ձեռոյս եկածը կ'ընեմ ուրիշին համար, ուրիշն ալ նոյնը կ'ընէ

իմ պիտոյից համար, այսպէսով երկոցունց պիտոյքն կը լրանայ։ (*)

Ա.յս պարտաւորութիւններէ յետոյ կուգայ առանձն ունեցած պարտքերնիս, այն պարտքը, որ միայն մեր անձերուն կը վերաբերի։ Ա.յս պարտաւորութեամբ պիտի ճանչնամք մեք ինքզինքնիս, և ըստ այնմ մեր կեանքը ու վարքը պիտի վարեմք. բայց ո՛չ երբէք մոլար և խստորնակ ճանապարհներու մէջ. որ շատ անգամ մոլութեան, չարադործութեան և վատթար բնաւորութեանց ատելի կիրքեր երևան կը հանեն։ Բայց այս մոլար ճամբայներն նկատել և անոնք զգուշանալ կարողանալու համար պարտիմք Տգիտութիւնը մերժել մեր մտքե-

(*) Մեր ընկերական պարտեաց մէջ կը դասաւորի նաև այն Աստուածահաճոյ առաքինութիւնն՝ Ողորմածութիւն կամ Ողորմութիւն, զոր մեր անկեալ նմանակիցներուն կը բաշխեմք. բայց անշուշտ ո՛չ այն ապօրէն ոճով, որ մեր մէջ կընուագնէ ծոյլ մուրացիկներ։

րէն և մեր փոյթեռանդն ջանիւք աշխատիլ, որչափ հնար է մեր մտքերը լուսաւորելու, որպէս զի կենաց ընթացքին մէջ գայթ 'ի գայթ չընթարթափիմք, այլ ուղիղ ճանապարհը գտնամք ընթանալու։ Եւ ո՛չ այսչափ միայն, այլ նաև մեր սրտերն ալ պարտիմք կրթել ու մշակել. որ անպիտան խոտերու և տատասկներու տեղ չընթողլով զարդարենք զայն 'ի ներքուստ ո բարի վարուց, աղնըւակամութեան և առաքինութեանց ծաղիկներով և քանի՛ երկարաձգին մեր կեանքն, այնչափ ևս մեր սրտերուն մէջ տնկեմք մեն մի վարդենիներ բարեգործութեանց և ընկերսիրական օգնութեանց։

Սակայն անձնական այս պարտաւորութեանց մէջ, յորում մեր հոգիներն ուղղութեան մէջ առնելու և պայծառ պահելու կրքնիմք։ Զըմռռանալ միանդամայն և մեր մարմինները, չըմռռանալ անոնց առողջութիւն՝ ու մաքրութիւնը,

կանոնաւորել մեր փափաքներնու դործերն, չափաւորելով կիրքերն ու զգացմունքը. որով եթէ ընդ մերթ ճախորդութեան կամ չարիքի մը հանդիպիմք սովրիմք տոկալ և հանդուրժել. զի աշխարհիս ընթացքը յեղյեղուկ ըլլալով յաջողութիւնք և ճախորդութիւնք, բարիք և չարիք իրարու կը յաջորդեն. ուստի այս կիսի պարապատ ի մէջ ալ հաստատամտութիւնը և յարատև ջանքը գործադրեմք վերստին դառնալու նախկին վիճակին, որուն դժուարութիւնը Աշխատութեան և Համբերութեան այս անպարտելի դիւցազանց առջև կը հարթանան և կը դիւրանան։

Ս. հաւասիկ իմաստուն մարդու մը այս աշխարհի վրայ վարելիք կենաց յատակագիծը այսչափ պարտի ըլլալ։ Երբ մարդն իրեն յատուկ եղած պարտքերն ուշի ուշով և ներմեռանդաբար կը կատարէ, յայտնի բան է որ երջանկութիւնը և հանգիստը անոր հասնար է, թէև իր վա-

յելած երջանկութիւնը անկատար եղած ըլլայ. երջանիկ է, որովհետև երբ աշխարհի ալէտք կըլլկեն զանի՝ կըմտնէ իր ներսիդին և իւր սիրտը կը քննէ. կը դտնէ խիղճն՝ հանդարտ և անդորր. կը դտնէ իւր հոգին մաքուր և պայծառ առաքինութեամբ և ուստի վեր կ'ամբառնայ մտաց երևակայութիւնն Յաւիտենականութեան այն վայելից վրայ, զոր պիտի վայելեն արդարք, այսպէսով կըմխիթարի և կ'սփոփի վշտացեալ մարդն իսկ։

Ընդունայն աշխարհի վրայ ալ ասկէ առաւել երջանկութիւն չըփնտռուիր, վասն զի կատարեալ երջանկութիւնը հոս չէ՝, Հանդերձելոյն մէջ է։ Եւ պարտահատոյց մարդիկ կրնան վայելել զայն։

«Ազգային գրադարան»
NL0247760